

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԻՍ ԱՋԿԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐԸՆՁԻԴՈՒՄ

Անցած տարի երբ Թիւրքիա Յունաստանի աչք բա-
նալու զոցելու ատեն չձգելով Չախլախեց այդ անկախ
պետութիւնը, Պոլիսէն Եւրոպա հասած սեղեկութիւնները
մեզի կը բերէին օսմանեան մայրաքաղաքին մէջ Հայոց
նկատմամբ սիրող նոր յարգանքին արտայայտութիւնը.
«Աս Յայնեքը Հայերուն չափ ալ չի կան եղբր. թաղաւոր
«ունին, բանակ ունին ու ամիս մը անդամ չկրցան զի-
«մանալ, մինչդեռ Հայերը այդ ամէնէն զուրկ ըլլալով
«մէկտեղ ահա տարիներէ ի վեր մեզի կը խաղցնեն. հե-
«ստերնին չենք կրնար գլուխ ելլել:» Ասանկ կը մտածէին
Պոլսոյ Թիւրքերը:

Օսմանցիները եթէ քիչ մը պատմութիւն ուսումնասի-
րած ըլլային՝ յունական եւ հայկական մաքառումներու
տարբերութիւնը կրենց զարմանք պատճառելու տեղ շատ
բնական երեւոյթ պիտի թուէր: Այն Յունաստանը որ իր
կազմակերպութեամբ իշխանութեամբ մէկ ամսուան մէջ
յաղթուեցաւ Թիւրքիայէն, այդ միեւնոյն Յունաստանը
երբ ո՛չ բանակ ունէր, ո՛չ թաղաւոր, տարիներ զիմադրեց
այդ միեւնոյն Թիւրք իշխանութեան ու յաղթեց ալ: Յու-
նաստանի եւ Թիւրքիոյ միջեւ 1897ին «Ազգային պատե-
րազմ» չէր մղուեր. երկու պետութիւններէն ո՛չ մէկուն
զոյլութեանը վտանգ կար. կը նմանէին ըմբռամարտներու
որոնցմէ գետին ինչո՞ղ չի մեռնիր. ինքնասիրութեան վի-
րաւորանքին հետ սահմանափակեալ նիւթական կորուստով
մը մարտնչուած կը վերջանայ: Բայց երբ կուսի մը ելքը
երկու պատերազմողներէն սկստին մահը պիտի ըլլայ,
վտանգուած ժողովուրդը այդ պարագային կը նմանի մար-
դու մը որ կը պաշարուի զինքը սպաննել ուզող թշնամի-
ներէ. անոր ուժը կ'աճի, անոր զօրութիւնը կը բազմա-
պատկուի վտանգին մեծութեանը համեմատութեամբ.
մէկը՝ կը հաստատի ամէնուն: Ապրելու տենչանքը եւ մեռ-
նելու վախը ինչպէս անհասանելուն ուժ կուտան նոյնպէս
եւ կը զօրացնեն ժողովուրդները ահեղ համարուած թըշ-
նամիին դէմ: Ու երբ ցեղային յատկութիւնները զաշնակ-
ցին այդ ուժին, իր զոյլութեանը համար կողուող ժողովըր-
դին պարտութիւնը ա՛լ կը զժուարանայ, ու յաղթանակը
հաւանական է կամ ստոյգ: Նարուէն Ա. Չախլախեց
Եւրոպան, բայց պարտուեցաւ Սպանիայէն երբ Սպանիա-

ցիներուն դէմ ազգային պատերազմ մղել ուզեց:
Ամէն համեմատութիւն պահելով հանդերձ պէտք է
ընդունինք թէ մենք Հայերս ալ ապրելու կամ մեռնելու
պատերազմն է որ կը մղենք. պատմութեան ապացուցած
օրէնքները կը կրկնուին եւ այս պարագային մէջ ալ. Եւ-
րոպէսեան ցեղային յատկութիւննիս սովորութիւնն է,
ուստի եւ կազմակերպութեամբ իշխանութեան մը առաւելու-
թիւններէն թէեւ զրկուած ըլլանք բայց եւ այնպէս ուժգին
կը զիմադրենք: Այդ զիմադրութիւնը որ մեզի յարգել
կուտայ մեր թշնամիին, երաշխաւորութիւնն է մեր վերջ-
նական յաջողութեանն ալ, եթէ անդրդուելի մեանք իբր
նմզգ ապրելու մեր որոշումին մէջ:
Այս յօդուածով մեր վերջին տարիներու պատմու-
թիւնը չէ որ կ'ուսումնասիրեմ, ուստի առանց մանրամաս-
նութեան զիմելու, միայն զբազան երեւոյթները նկատու-
ղութեան կ'առնեմ եւ կ'ըսեմ թէ մեր սխալները ինչ սր
ալ եղած ըլլան, օտար քաղաքականութիւն մը սրբ սր որ
ալ մեզի մեր ճամբէն շեղել ուզեց, եւ կ'ուզէ, բայց եւ այն-
պէս մինչեւ հիմա մղուած մաքառումին ելքը մեզի համար
տեղի քաջալերիչ է քան թէ վհատեցուցիչ:
Արտառոց կարծիք մը չէ որ կը յայտնեմ: Մեր թըշ-
նամիին կէտ նպատակին մեր ջնջումն էր. մենք ալ ինք-
նապաշտպանութեան զիմեցինք. բնաջինջ չեղանք. թշնա-
միինս իր նորատակին չհատու. ահա պարզ իրողութիւնը:
Իրաւ է, մեր Թիւրք պակտեցաւ, մեր անստեսական վիճակը
վատթարացաւ, բայց ժողովուրդի մը ինքնութիւնը ո՛չ որոշ-
եալ թիւի մը վէջ կը Վիւյննայ, ո՛չ հարստութեան սահ-
մանուած բանակի մը մէջ. Գորատազ քանի սը հարիւր
հազար բնակիչով եւ ապառաժուս երկրով մը այնքան ինք-
նուրոյն ժողովուրդ է սրբան Պրոսնոք 38 միլիոնաբնակի-
չով եւ արդասարեւ հոգով: Հայերը Թիւրքիոյ մէջ, ԻԻԲ
ԱԶԳՈՒԹԻՒՆ, իրենց հիմակուան թուովը եւ անտեսա-
կան կացութեամբը ա՛յն են ինչ որ էին 1894ին. ազգայ-
նութեան սահման չի կայ. կոտորածը Հայեր պակտեցուց
բայց Հայութիւնը չոչնչացուց. թալանը Հայեր ազգատուցուց
բայց Հայութիւնը չոչնչացուց:
Բազմադարեան կազմին է Հայութիւնը. իր ճիւղերը
շատ կտրտեցին, բայց իրանը կը մնայ, արմատները ողջ
են. ծառը պիտի վերընձիւղի եւ պիտի ուսճանայ: Մեծ
Յեղափոխութիւնը նոր սկսած է:

Յեղափոխութիւն բացատրութեամբ պէտք չէ հասկնալ միայն ժողովրդին զէնքովը երկրի մը վարչական, սնտեսական դրութեան քանդումը, կամ իշխող արքայական զերդաստանին տապալումը: Նոր գաղափարներու ծագումէն կը սկսի Յեղափոխութիւնը որ ժողովուրդներու պահպանութեան անհրաժեշտ պայմանն է: Երբ կառավարութիւնները իմաստուն են, Յեղափոխութիւնը կը յաղթանակէ, վասն զի պարտաւոր է յաղթել, առանց արիւնահեղութեան. իշխանութիւններու տիմարութիւնն է որ զէնքի միջամտութիւնը անխուսափելի հարկ կը դարձնէ: Անզիտ վաթսուն տարուան մէջ հեղափոխութիւններու ցաւ, առանց ցնցումի, և կը շարժուակէ յեղափոխութիւնը: Անզիտացիները կը սիրեն ըսել, «բնաշրջի»: Ընկերական մեծ Յեղափոխութիւնը որուն կ'առաջնորդէ ընկերավարութիւնը, իր յառաջխաղացութիւնը կը շարունակէ նոյն իսկ Գերմանիոյ նման զինուորապետական կայսրութեան մը մէջ: Իտալիոյ կառավարութեան անհեռատեսութիւնը զէնքի դիմուք պարտաւորիչ ըրաւ: Գերբին ահեղ կոտորածներու բացուեցաւ: Թիւրքիոյ մէջ Յեղափոխութիւնը զոյսութիւն չէ ունեցած որ և է երեւոյթի սակ, ըրայ խաղաղասիրական, ըլլայ խռովարարական. անոր համար է որ այդ կայսրութիւնը հիւանդ է: Թիւրքիոյ մէջ յեղափոխական չի կայ, այլ միայն ապստամբ: Ապստամբ Յունաստան, ապստամբ Ռումանիա, ապստամբ Սերպիա, ապստամբ Պոլիարիա, ապստամբ Ալբանիա, ապստամբ Եթովպիա, ամենքն ալ ընդհանուր մարտնչական շարժումով, կամ անշատուելու ցանկացողները:

Թիւրքիոյ միակ յեղափոխական ժողովուրդը Հայը եղած է, թէև անհոյս սահմաններու մէջ: Ապստամբելու անկարող և միանգամայն ընդհանուր կրկիբը յեղափոխութեան առաջնորդելու անզոր գոյնուելով, Հայ ժողովուրդը ինքն իր մէջ յեղափոխուած է 70 տարիէ ի վեր: Այդ յառաջդիմութեամբ Հայ ժողովուրդը կրցաւ մասաւորական, բարոյական, նիւթական գերազանցութիւն ձեռք բերել լճացեալ վիճակէ մէջ մըրդ իսլամներուն վրայ: Մեր այս գերազանցութիւնն էր մանաւանդ որ զրգեց թիւրքիոյ իշխանութիւնը նորանոց քաղցր դնելու սեղ յառաջխաղացութեան առջև. բայց ջուրը իր ճամբան միշտ կը բանայ:

Դարերու ընթացքին մէջ այդ ճամբան շատ անգամ գոցուած է Հայ ժողովրդին առջև, ու Հայը զայն միշտ բացած է, ամենամեծ զոհողութիւններով: Մովսէսի ազգայնութեան կորուստնիս վերջնական պիտի ըլլանք անոնց այդ զոհողութիւններուն: Ու Հայ ազգը ամէն ատեն որ վտանգը անցուցած է անմիջապէս յետոյ սկսեք է նոր ուժով աշխատիլ իր կորուստներուն տեղը բերելու: Համար, անոնց վրայ նորանոր պաւերութիւններով աւելցնելով: Եւ միշտ առաջ երթալով մէջ վիճումն ենք անցեալին փոխարինութիւնը: Հիմա մեր այսօր աղեկներուն վրայ աւելի քան երբեք կը մղուինք վէպի վերածննդութիւն: Բնագրը ու մտածութիւնը սկսած են թելադրել մեզի այն պայմանները որոնց շնորհիւ աւելի բաշտուող պիտի վե-

րակենդանանանք, ու ազգութեան ապագանիս հաստահին պիտի զետեղենք: Այս է ահա մեր նոր մեծ Յեղափոխութիւնը որուն նշանները չեմ ըսեր թէ կը նշմարուին, այլ աչքի կը զարնեն ամէն կողմէն:



Հայաստանի հիմակուան կացութեան վրայ ականատես օտարազգիներու տեղեկութիւնները ինամբով կ'ամփոփուին «Երբեք»-ի մէջ, եւ ասով արտասահմանի Հայերը կը սկսին որոշ գաղափար մը կազմել հայրենիքին անտեսական եւ բարոյական վիճակին վրայ: Այդ ստուգապատում տեղեկութիւններէն կը տեսնուի որ Հայ ազգը այսօր կը նմանի, մինչև աստիճան մը անշուշտ, 1871ի Ֆրանսային: Մեծ պարտութենէն հաջորդ մեծ ազդը խեղճը պուրը ժողովց, եւ ինքնամփոփումի մէջ իր վերածնութեանը հետամտեցաւ աշխատանքի կրկնապատկութեամբ, աւելի կորովով եւ աւելի բանիմացութեամբ. ամուսնութիւնները շատցան, ծննդաբերութիւնները աճեցան, ու Ֆրանսա, մէկ կողմէն իր կործանումէն վերսկանգնելով, միւս կողմէն իր բարոյական վերանորոգման ձեռք զարկաւ կրթական գործը տարօրինապէս ընդարձակելով ու զարգացնելով: Հայ ազգն ալ, թէ՛ խորհելով, թէ՛ բնագոյն մղուած միեւնոյն ճամբէն կ'ընթանայ: Իրաւ է որ ինքնազուրկ, միաձոյլ մեծ ժողովրդի մը վայելած առաւելութիւններէն եւ ոչ մէկը կը նշատուորէ մեզի, սակայն մեր բոլոր պատկութեանը մէջ, եթէ կ'ուզէք ըսենք նաեւ, Ֆրանսայի բազմաամբ, մեր բոլոր ոչնչութեանը մէջ, մենք աւելի խորին, աւելի ուժով, արեան ու մտին փակած արժանիքներ ունինք, հետեւաբար եւ ազգային վերակենդանութեան համար հաւատքնիս միշտ տար է եւ անխախտ:

Ամենքս սրտապնդող առաջին երեւոյթն է Հայ ազգին ամէն ատեն աւելի իր հողին փարած մտաւ տեսչանքը: Արիւնէն, թաւանէն հոքը, ապահովութեան ամէն միջոց զուրկ Հայը կը յամարի իր երկրին կցուած մտալ, ինքն ալ իր հողին էական մէկ մասը: Եւ անոնք որ լեղապատառ կոչուած փախած էին կ'ուզեն նորէն իրենց երկիրը դառնալ, ամէն տառապանք աչքերնին առնելով:

Ու ինչ աշխատանք այդ հողին վրայ: Վաստակին արդիւնքը մեծ մասամբ իրենցը չէ. կեղեքում, յափշտակութիւն, կը շարունակեն անպարտում, բայց հայը միշտ կ'աշխատի, միշտ կ'արտադրէ: Գիտէ որ ո՛վ որ չի յուսահատիր անոր ապագան ապահովուած է, եւ օր մը կեղեքումներն ալ պիտի գաղթին, յափշտակութիւններն ալ, ու ինք իր աչքը պիտի ըլլայ. ինչիւրը դիմանալուն մէջ է: Մենք վերջին տարբեր են իսլամները, թէև անբնականոց ցեղ, թէև զինուորական ժողովուրդ: «Հայոց պատահած հաղէտներուն մէկ մասը եթէ մեր պուրը գար չէինք կրնար «վիճանալ» յայտարարած են ամէն տեղ: Կառավարական դրութիւնը որով իսլամները Հայուն քրտինքով հանգստաւա ապրելու վարժուած են, մանչուտեր է թիւրքին ներքին բոլոր զսպանակները:

Կովկասի եւ Պարսոյ օրագիրներուն հրատարակութիւնն
 ներքէն կը տեսնենք թէ Հայոց ամուսնութիւնները վերջին
 երկու երեք Թարուան մէջ սկսեցին են բազմանալ, նմանապէս
 պէտք եւ անձանք են Յանձնարարը: Դիտուած է թէ ամէն պե-
 տերապէս վերջ ամուսնութիւնները եւ ծնունդները Վր-
 Ֆաստան: Բնագրը իր թիւնը պատեհով վերագործ
 շող Պարսոյի մը իր ինքնապահպանութեամբ միջոցները
 ապահովել, կործանարար տեղը շուտ լեցնելով: Մենք թէև
 պատերազմի դժշտեցուն վրայ շարդուեցանք, բայց ար-
 դիւնքը միեւնոյնն է, ուստի եւ բնագրին ազդեցութեան
 տակ կը հպատակինք անուսի եւ բազմացումի պատերազ-
 մական օրէնքին:

Իսկ ազգային դաստիարակութեան առած նոր թոնջին
 վրայ զարգացող մը տալու համար, բաւական կը համա-
 րիմ առաջ բերել Ազարեան պատրիարքին կողմէն 98
 փետրուար 4 Թուականով Բարիք Հ. Եւրոպայի խոր-
 կուած տեղեկագրէն հետեւեալ տողերը.

«Գրիգորեանները (Ղուսաւորչական Հայերը) որ պիտի
 «բան ծանրապէս սաստապեցան, կը յիշեն թէ իրենց ճգա-
 «կտոր եղած ազգին սպառնալի ապահովելու համար պէտք է
 «աւելի բան երբեք ուժգին փարիլ կրթական հաստատու-
 «թիւններուն: Անհատաւորի գործունէութեամբ կազմա-
 «կերպեցին իրենց յատուկ յանձնաժողովը, եւ արդէն,
 «ամիսներէ ի վեր, ապշեցուցիչ կենսակաճութիւն ցոյց
 «կուտան, հակառակ այն բազմութիւն ու ծանր խոչընդոտ-
 «ներուն սրտնք իրենց աշխատութիւններուն արդիւք կ'ըլ-
 «լան: Իրենց այս ձեռնարկին մէջ գրամական նշանաւոր
 «օգնութիւններ լը հասնին իրենց. ու մարդ իրաւցնէ զար-
 «մացած կը մնայ տեսնելով այն անդիւնքները զոր ձեռք
 «կը բերեն իրենց ջանքերուն յաջողութեամբ այնքան
 «աննպաստ հանգամանքներու սէջ: Կարծես թէ խոտու-
 «թեան այս վերջին տարիներու մէջ իրենց կ'ըմբոստեցած
 «ժամանակինն ետեւէն կ'ազգէն վազել եւ կորուստինն ձեռք
 «անցընել. եւ կրթական կողմանին վրայ անոնց եռանդատ
 «թոնջին՝ կ'աճիլի չէ չսքանչանալ:»

Այս վիճակութիւնը ճշմարիտ է. ազգային կրթութեան
 մեծ գործ տալու պէտքը նմէն կողմէն զգացուած է. եւ
 թիւրք կառավարութիւնը ինչ խոչընդոտներ ալ որ յարու-
 ցանէ, զպրօցները կը յառաջանան:

Կորսնցուցած ժամանակին հետ կորսնցուցած հարը-
 տութիւնն ալ վերստանալու կ'աշխատի Հայը: Երկրի մը
 ճէջ մէկէն ի մէկ վաճառականներու, արհեստավորներու
 նոր գաս մը ստեղծել կարելի չէ. առեւտրին ու արհես-
 տին մենաշնորհը Հայոցն է. ո՛չ ոք կրնայ գալ եւ մեր
 տեղը մէկէն ի մէկ բռնել: Երկրագոյն տեղեկութիւնները
 կը հանդիւրդեն թէ վաճառականութիւնը յեջող ճամբու մէջ
 սկսած է մտնել:

Եւ սակայն այս ամէնը պիտի չի բաւեն մեր Վերած-
 ծնունդին: Ազգային դաճնացած օրտի խոր զգացումը՝ որ
 ժողովրդի մը հոգին կը կերպարանաւորէ, եւ զրական
 մտքի մը լրջութիւնը միանալով մեր ցնդային տոհմունու-
 թեանը, մեր ազգային աշխատասիրութեանը եւ մեր առհ-

մային դաստիարակութեանը, մեզի կը բանան նոր կեանքի
 մը թուականը: Այսինքն վաշտի աշխատի յարմարեցող
 Հայուն պէտքերն առնելով, բազմաթիւութեան ընդունակ
 եւ զարթոնք ազնուագրի մողովորդի մը գեմ աներեւա-
 կայելի, հսկայատիկային հակաբնական անիբաւութիւն-
 ներուք յիշատակը չի ջնջուիր մեր սրտէն: Հո՛նչ պայմանաց
 վերջը Վիշա բաշտ Երու գրականութիւնը պազային զգա-
 ցումին թժարմայնը, թիւք արեւելի մեծցնապէս երեւանապի-
 տի բերէ մեր վշտին մեծութիւնը ու խորութիւնը:

Բայց ընդունելու ենք նաեւ որ առ այժմ՝ մեր էն ար-
 կար կողմը ազգային մտքեցնիս է. եւ այս առթիւ պէտք է
 պիտանք թէ տոհմունութիւն, աշխատասիրութիւն, բարո-
 յականութիւն, զգացումի սրբութիւն չեն կրնար իրենք ի-
 րենց ապահովել վերածնութիւնը այնպիսի ժողովրդի մը
 որ մեր վիճակին մէջ կը շտնոյի մինչեւ որ այլ ժողո-
 վրդին միտքը գիտական մտքի մը յատկութիւններովը չօժ-
 տուի: Ամէն բանին ինչպէք եւ ինչպէն փնտոել, պատ-
 «ճաններուն եւ արդիւնքներուն զղձայլումին հետամտիլ,
 «երեւոյթներուն օրէնքները քննել,» ահա համառօտա-
 բար ինչպէս կը սահմանուի գիտական միտքը: Այլ միտ-
 քը միայն գիտուններուն առանձնաշնորհուած չէ. կեանքի
 ամէն պայմաններու մէջ ապահով առաջնորդ գիտական
 միտքը կրնայ ըլլալ: Դժբաղդաբար հայ ժողովուրդը, իբր
 արեւելցի, աւելի երեւակայութեամբ օժտուած է քան թէ
 գիտական մտքով: Մեր կէն դարձե դաստիարակութիւնը
 ազգային մտքերնիս չուժովցուց: Հետեւանքներուն վրայ
 ծանրամալու պէտք չի կայ հիմա. պէտքը՝ քննող, ճշգրիտ,
 գիտական միտք ունենալն է: Թէ՛ անհատները, թէ՛ ազ-
 գերը պարագաներու բերմամբ կրնան քիչ առնել մէջ շատ
 մը առեւելութիւններու տիրանալ, բայց ո՛չ անհատները,
 ո՛չ ազգերը կրնան կարճ ժամանակամիջոցի մէջ գիտա-
 կան մտքի յատկութիւններովը օժտուիլ:

Սակայն շատ մը նշաններ ցոյց կուտան թէ հայ մո-
 ղովուրդը թիւքս է աւելի զրական ըլլալ, եւ գիտական
 միտք մը ունենալու պէտքը կը զգացուի: Ալ բացազանչու-
 թիւնները, ուսուցիկ պարբերութիւնները, ճարտաստական
 չօգուածները, բարկանայթ ուսումները ո՛չ միայն օրէ
 օր անազգեցիկ կը դառնան այլ եւ ծիծաղելի կ'ըլլան: Ահա
 փրկութեան լաւագոյն նշանը:

Երբ սեպտեմբեր 18՝30ին վրայ սատրագամ Բիւլիւք
 Սայլա փաշա պաշտօնանկ եղաւ, բանի մը օր ետքը իրեն
 բարեկամ Հայու մը կ'ըսէր՝

— Առջի սատրագամութեանս (մինչեւ 1885) ես էի
 որ Հայոց դէմ խիստ ընթացքի մը հետեւելու բազմա-
 կանութիւնը յանձնարարեցի եւ սկսայ ալ գործադրել. կը
 կարճէի որ շուտ մը կը տկարանան եւ կը սմբին, բայց
 հետզհետէ զգացի թէ Հայոց հետ զուգի ելլելը դիւրին չէ.
 ուստի պէտք է որ առկէ ետքը աւելի հաշտարար բազա-
 քականութեան մը հետեւինք:

Այս ճշմարտութիւնը շնչունով չթափանցեց թիւրքիոյ

կանաւարական շրջանակներուն մարին մէջ ալ, և միշտ կարծուեցաւ թէ Սայիտ փաշայի նախկին քաղաքականութիւնը կատարելագործութեան հասցնելով կարելի պիտի ըլլայ մեզի հետ գլուխ հըլել. փորձը նորէն հաստատեց թէ սխալած ենք և շարաշար սխալած: Դեռ յայտնի չէ թէ ասիէ ետքը աւելի խելացի պիտի գտնուէն յայց եթէ շարունակեն տոբրեոյթ հնշարար քաղաքականութեան մի ծածկոյթին տակէն մեզի հալածելու գրութիւնը, տարակոյս չի կայ թէ հետեւանք շատ ձանր պիտի ըլլայ թիրաքիոյ համար:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,

ԻՐ ԴԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Ե.

ՀԱՅՈՑ ԵՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆԴԻՐԸ

Թիրաքիոյ Հայոց գրականութեան ընթացքին հետ զուգահեռաբար, ուրիշ գրականութիւն մը զարգացած էր Ռուսիոյ Հայոց մէջ: Առաջինը ժողովրդին մէջ ազգային գրացումն արթնցուցած էր. երկրորդը աւելի վճռական եղաւ, շիտակ նպատակին գիմեց, ժողովուրդը բժբոստացման մղեց: Ռուսական վկային և գերման ընկերական գրականութեան ազդեցութիւնը, գրական կարողութեանց ազատ զարգացմանը նպաստաւոր միջավայրին պայմանները, դերացուցին այդ յանդուգն գրականութեան կառուարումը: 1840ին, Աբովեան ցաւագին իրականութեամբ յօրինուած վկայով մը (Վ Է Բ Ե Հ ա յ ա ս տ ա ն ի) ցուցուց Հայ ժողովրդին ստոապանքներն ու արդէն իրազեկ՝ վերկարար ցնցումը: Նախնայեան ժողովրդին առջև պարզեց իր թշուառ և անթալի կացութիւնը, կոչում ըրաւ անոր ինքզինքը պաշտպանելու, երգեց ազատութեան մեծ երգը, զոր ամբողջ ազգը հնչեցուց:

Թող որոտայ իմ գլխին

Փայլակ, կայծակ, հուր, երկաթ.

Թող դաւ գրնէ թշնամին.

Մինչեւ ի մահ կախաղան,

Մինչեւ անարգ մահու սիւն,

Պիտի գոռամ պիտ՝ կրկնեմ

Անդադար ազատութիւն:

Եւ մինչդեռ Աղանանց բանաստեղծը, բարբերու վիպասան Պոռչեանցը, Գերովբէ Պատկանեան և Մկրտիչ

Էմին բանասերները կ'արաագրէին ազգային գրականութեան վաւրական բնութեան գործեր, մինչդեռ գաղափարներու մեծ սերմանիչ Արճունին իր «Մշակ» լրագրին միջոցով ամբողջ ազգին մէջ կը սփռէր առողջ, աւուր և նորոգիչ ոգով գաղափարներ, երկու գրագէտներ իրենցան որոնք շարունակեցին և աւարակցին Նախնայեանի գործը. առոնք էին Քամառ-Քաթիպա երգահար և Բաֆֆի վիպասանը: Երկուքն ալ գրականութեան մէջ յեղափոխականներ եղան: Քամառ-Քաթիպա ժողովրդին հոգին թոթովեց իր երգերովը որոնք զանի կը մղէին յարձակմանց գէմ ինքնապաշտպանութեան պատրաստելու, աւազակներուն բիրտ ուժով պատասխանելու, ինքզինքն իր ձեռքով ազատելու փոխանակ սպասելու Երուսալիմ սր շատ հեռու է և Աստուծոյ որչափ վերն է: Բաֆֆի մինչ չեւ ծայրը գնաց. իր վէպերուն մէջ մերկացուց ժողովրդին ներքին վերքերը, սկարութիւնները, միամտութիւնները, թուլութիւնը, և համակերպութեան այն մահացու ոգին զոր քրիստոնէական սաղմոսերգութեան պարեր անոր հոգին մէջ արմատացուցեր էին: Յանդուգնութիւնն ունեցաւ այդ ազիտաբեր ոգին գէմ բողոքելու, և անոնց գէմ որ զայն սնուցած էին, եկեղեցական գրագէտներուն գէմ: Չ ա լ ա լ է տ տ ի ն վէպին աւազակ դարձած ահաւոր նախկին բահանան, Գիւրտերէն կողոպտուած վանքին խորը կ'աղաղակը:

«Ո՛վ հայրեր, ո՛վ պապեր, այս պատիւը խմում եմ, բայց առանց նուիրելու ձեր ոսկորներին: Եթէ դուք այս վանքերի տեղ, որոնցմով լինէ և մեր երկիրը, բերդեր շինէիք, — եթէ դուք սուրբ խաչերի և անթմների փոխարէն, որ սպառեցին ձեր հարստութիւնը, գէնքեր գնէիք, եթէ դուք այն անուշահոտութեանց տեղ որ ինկլում են մեր տաճարներում, վառոց ծխէիք, այժմ մեր երկիրը բազաւոր կը լինէր:»

«Խմում եմ այս բաժակը առանց նուիրելու ձեզ, ո՛վ զիր և զարութիւն, որովհետեւ դուք շուտիք մեզ այն ինչ որ պահանջում է կեանքը և իրական աշխարհը: Դուք լցրիք մեր դուրը անայն վերացական ցնորքներով... Դուք մեզանից գիտկներ պատրաստեցիք, որոնց մէջ մեռած է ամէն մարդկային բարձր և վոսմ գզացմունք: Դուք աւելի սնդագրիք մեր ստրկութեան շղթաները և վարձեցրիք տանել բնութեան ծանր և անպատիւ լուծը:»

Ճշմարիտ է որ Բաֆֆի անարգար էր այսքան բացարձակ խստութեամբ Հայ Եկեղեցին գատապարտելով: Շատ քիչ նկատազուծեան կ'անէր այն գերը՝ զոր այդ Եկեղեցին խաղացած էր ցեղին պահպանման և նորացման գործին մէջ. պէտք եղածին չափ չէր տեսներ որ եթէ այդ հոգիի գրականութիւնը նպաստած էր այս ժողովրդին պատերազմիկ յատկութիւնները տկարացնելու, մեծ ծառայութիւնը մատուցած էր անոր մտաւորականութիւնը նրբացնելու, արեւմտեան աշխարհին բժբոնումն անոր կարելի պարձնելու: Բայց Բաֆֆի գիտուն մը չէր. յեղափոխական մըն էր. կողմնակալ և հզոր եղաւ: Պատճառներու երկայն ու կնճատ շարքի մը տիրուր հետեւանքը միան

տեսաւ, եւ անսորքաբար կանգնեցաւ կրօնական գագաման
դէմ, որովհետեւ անոր մէջ կը գտնուէր ժողովրդին համա-
կերպութեան գլխաւոր պատճառը: Ուղեց վերէն ի վար
կործանել հայ հոգիին շինուածքը՝ զայն նոր եւ ազատ
հիմերու վրայ կանգնելու համար:

Չայրայեկ մեծ շունչ մը կ'անցնէր իր գործին մէջէն: Ծայրայեկ անգլութեամբ ու անկեղծութեամբ, Բաֆֆի կ'ըսէր իր ժողովրդին. «Դուն ուշիմ ես, դուն աշխատող ես. եւ այս բոլոր ազգերը որ բեկի կը տիրեն եւ բեզ կը խոշտանգեն, բու աշխատութեամբ կ'ապրին. դուն ես ա- մէնէն ուժովը. դուն սահմանուած ես քաղաքակիրթ ազգ մը ըլլալու, ինչպէս եղած ես ասեմով: Հերի՛ք՝ համբերու- թիւն, հերի՛ք՝ աղօթք. սորվէ՛ նախ ինքզինքդ պաշտպա- նել, բու մարդկային իրաւունքներդ տիրացիր, ելիր կանգնէ՛ բանաստեղծեան ու վայրկեանութեան դէմ, եւ պի- տի ունենաս այն կեանքը որուն արժանի ես:» Եւ Բաֆ- ֆի կը ցուցնէր, անողոր յասակութեամբ, փրկութեան արժանա ճամբան:

Ժողովուրդը մտիկ ըրաւ կարմիր ձայնին, եւ հետե- ւեցաւ անոր: Համակերպած գանդուածին մէջէն, հրա- վառ երիտասարդութիւն մը ելաւ: Մասնախումբեր կազ- մուեցան, ինքնապաշտպանութեան գործը պատրաստելու, արդարութիւնը հաստատելու համար: Դիմադրութիւնը սկսաւ ուրուագծուիլ ժողովրդին մէջ: Ապստամբ խմբակ- ներ գէնքով պատասխանեցին Քիւրաեբու յերուզակային հրոմանրուն. ցոյցեր տեղի ունեցան: Եւ որովհետեւ սուլ- թանը հասկցաւ որ բանտարկութիւնները, բանտի մէջ շարչարանքները, խեղդումներն ու բոլոր խտտութեան մի- ջոցները անկարելի էին զսպելու շարժումը որ հետզհե- տէ կը մեծնար, փոխանակ արդար պահանջներ գոհացնե- լու ժողովրդի մը որ ապրելու իրաւունքը կ'ուզէր եւ սրուն բարօրութիւնը ամբողջ պետութեան փրկութիւնը պիտի ապահովէր, որոշեց զայն զսպել թրքական զիւանազիտու- թեան սիրելի միջոցովը, Չարդով: Իր զինուորները, իր Քիւրաեբը, իր Չերքէտները ծրագրերը իրագործեցին զար- հուրելի կատարելութեամբ:

Պիտի չժանրանամ, — ոչ աստն ունիմ ոչ սիրտ — Չարգերուն մանրամասնութեանց վրայ: Ամէն երեւակա- յութեան վեր է անոնց արհաւիրալի ու զազիր նկարագիրը: Եւ արդէն, դուք իսկ պէտք եղածէն աւելի զազափար ու- նիք անոնց վրայ: Այսօր ամէն մարդ համոզուած է, — եւ «Դեղին Գիրք»ը զեռ նոր ամենայնուակ կերպով ապացու- ցուց զայն, — թէ Չարգերը կանոնաւորապէս կազմակեր- պուած էին՝ զեռ Հայերը բողոքի շարժում մը չյարու- ցած, եւ թէ նոյն իսկ սուլթանին հրամանով կատարուեցան: Սա անզգամ, նոզկալի ու վաս բանը տեղի ունեցաւ. ու- րովհետեւ Հայերը՝ սուլթանին ուղղած ազերսագրերով ու Եւրոպայի զրկուած պատգամաւորութիւններով՝ կը խնդրէին որ իրենց մարդկային իրաւունքները յարգուին, եւ որովհետեւ, շատ սառապելէ աչքերնին զարձած, մէկ քանի տեղ սկսած էին զէնքով դիմադրել աւազակ խում- բերու յարձակմանց, թիւրք ժողովուրդը, զինուորներուն

եւ քիւրա ու չերքէս յերուզակներուն միացած, խուճեց անոնց վրայ որ դարերէ ի վեր իրեն ծառայած, զինքը սնուցած էին, եւ զանոնք մարթեց, խոշտանգեց, կողոպ- տեց անողորմաբար: Հայերը, զէնք ջողանալով, ուսման- քան կուտակուած ուժերու դէմ շատ սակաւամիտ, յաճախ վատօրէն խաբուելով կառավարութիւնէն, եւ յանկարծակի յարձակում կրելով, զիրենք պաշտպանել կրցան միմիայն այն տեղուանքը ուր իրենց համար մարդկայնօրէն կարելի էր առիկա: Անոնք որ ի նպաստ Հայաց ուղեցին համակ- րութիւն յարուցանել, Չարդի պատակներն միայն գծեցին՝ հասարակութիւնը յուլելու համար, եւ այսպէսով Հայոց՝ Չարդուող ազգի տիրու համբար շինեցին: Կարծեմ թէ շատ մոռցուած է թէ այս ազգը, զոր ջողհերու հօտի մը մը հետ կը շփոթեն, պատմութեան մէջ շատ անգամ իր պատերազմական յատկութեանց փայլուն ապացոյցներ տուած է եւ թէ վերջերս ինք եղաւ նորէն պետութեան բա- լոր ցեղերուն մէջէն առաջինը որ համարձակեցաւ, նոյն իսկ թիւրքից մայրաքաղաքին մէջ, սուլթանին զգուելի բանաստեղծեանը դէմ բողոք բարձրացնել: Կարծեմ նաև թէ շատ բիշ նկատողութեան անուեցան այն կնճոտտ պայմանները որոնք ինքնապաշտպանութիւնը այնքան պճուար կը դարձնեն Հայոց՝ մեծ Հայաստանի մէկ քանի գաւառներուն մէջ, եւ թէ բաւական չեն յիշեր որ եթէ Հա- յերը՝ շատ մը քաղաքներու մէջ՝ ստորաբ մեծամասնու- թիւն ունեցող թշնամիէն Չախլախուեցան, կրցան սակայն յաղթականօրէն շարունակել ապստամբութիւն մը՝ վեց ամսու չափ՝ Զէյթունի մէջ, այդ Հայկական կրետէն:

Այսօր, կրեալ ամբողջ Եւրոպան կը վրդովէ: Իր Երա- թիէ մը աւելի տեսող հայակապ դիմադրութիւնը իրաւամբ եւրոպական ժողովուրդներուն հիացումն ու համակրու- թիւնը կը գրաւէ: Բայց որովհետեւ Եւրոպայի ժողովուրդ- ներուն համակրութիւնը չի բաւեր ճշմուած ազգերն իրենց տատապանքէն ազատելու, յոյն կառավարութիւնը, ժողո- վրդական ազնիւ եւ բուն շարժումէ մը մղուածով ամենա- մեծ զոհողութիւններ յանձն առաւ ինքի իսկ իր կրետէի եզրայրներուն օգնութեան հասնելու համար: Համարձա- կութիւնը պիտի չառնեմ Եւրոպայի ընթացքը որակելու. միայն պիտի ըսեմ թէ իմ Արեւելցիի թերեւ շատ պարզ մաքիս համար, այս Եւրոպան որ հակառակ իր խոստում- ներուն եւ իր զաշնագրերուն Հայաստանի բնութեան Չար- վերը ամենայն հանդարտութեամբ կը դիտէ եւ այսօր թիւ- նաստանին կը սպասուայ՝ որովհետեւ ամ կ'ուզէ կրետէցի- ները Չարդուելէ արդիւլ, այս Եւրոպան ինձի անհասկա- նալի կ'երեւայ: Ինչ որ կը հասկնամ, այն արհիւմար- հանքն է զոր Չարդու թիւրքը այսօր զգալու է Եւրոպայի համար. սուլթանը անոր համար հիմա երկրի ամէնէն մեծ վեհապետը դարձած ըլլալու է, որուն առջեւ կը խո- նարհի Եւրոպա ըսուած խոշոր քաճը: Արդէն Հայաստա- նի Չարդերուն ժամանակ, Չարդոյնքը արհամարհան հեղուութեամբ մը դ'ըսէին Հայերուն՝ զանոնք սպաննելու առեմնին՝ «Գայէք ձեր հիւպատոսին բով սատկեցէք»:

Հիմա աւելի ցոտզամցած են. ահա Պոլսոյ մէկ թիւրք լը-
 րագրին մէջ քանի մը տրամաջ ձրեւցած յօդուածի մը մէկ
 հատուածը. «Յոյն կարաւաքութեանն զրկուած քանի մը
 սրիկայ խոտարարներ թէեւ Պոլսոյն զրոյզել բարեկար-
 գութիւնը որ կը տիրէր Կրեմէի մէջ՝ շնորհիւ նորին ամե-
 նարդիւմէ՝ վեհափառութեան ցոյցներն, բայց Եւրոպայի
 բոլոր կանաղարութիւնները համաձայն են Յունաստանը
 ծակածիւր իր վնասներ ամբարտաւանութեանը համար»

Թիւրքերէն ձր. զեռ Հայոց արիւնդը ծննդունչ, կ'ուրա-
 խանան Եւրոպայէն օժանդակութիւնն ու խնայելուութիւնն
 տեսնելով պիտի խոստովանիք որ ցաւովի տեսարան մըն
 էր աստ Եւրոպայէն որ անպիտան օրով մտածել յաւիտէն մէջ
 որել տալու արիւնէ ժանգոթած եւրթ աղան ները վաղ-
 րուն ջարդերուն համար

Սը իրիկուն խնդրոցն են որ թէ զիւսանազաններուն
 որոնց համար հարմարահարուած ժողովուրդներն ու բնոնց
 առաւապանները քաղաքական հետաքրքրութեան տեղա-
 կետով միայն շահեկան են. խօսեցայ մտածողներուն,
 արուեստագէտներուն, անոնց որ կը սիրեն մարդկային
 կարգին փոխուած քաղաքները իրարանջիւր ազգի
 մասնաւոր հոգեբանութեան մէջ խօսեցայ Բարիքի յո՞ւ
 զովքին, որ ինքն իսկ այնքան արուեստագէտ, այն-
 քան բանաստեղծ է, եւ որ միշտ վեհանձն ու խանդովան
 է եղած ամէն կարողի արտայայտութեան, անկէ վեպի
 ազատութիւն եզրկտի բարեբաղիթութիւն ուղղուած ջան-
 քերու արջեւ. Գծիցի մտաւարական կեանքին պարոյթը
 փոքրիկի մը որ թէեւ Արեւելքի մէջ բուռած, միշտ
 խորհրդանշոր հակումներով՝ գէպի Արեւմուտք երկնցած է
 արեւով՝ դէպի բրիտանեայ Յունաստանը, այն զարուս
 դէպի ազաւ Ֆրանսան. Չանացի ցոյց տալ թէ այս ծո-
 զովուրդը ոչոքն մեծագոյրդ դժբաղդութիւնները Եւրոպայի
 ցաւակցական ուշադրութիւնը հրաւիրեցին, իր փոքրիկ
 թիւններէն զաստիճանի պիտակատով շահեկան է՞ Փորձե-
 ցի բացատրել թէ աչա փոքրիկը, ճակատադրին ճեմ-
 քով Արեւելքի եւ Արեւմուտքի մէջանող հաստատուած,
 ունենալով ճապուղի ու գիւրաւ իբրեցնող միմը, կրնար,
 լաւագոյն պայմաններով, փոքր-Արիւր մէջ եւրոպական
 բաղաբաղիթութեան խնոր մը դանախ: Երջանիկ նիւի
 ըլլայի՝ եթէ հարստահարուածներուն յիմակովը չհա-
 զրգուողները հաճեմ Հայաստանի ջարդերուն մէջ տես-
 նալ գիտնիւրու հիշելային կողմակիւտէ աւելի բան մը
 կ'ուզէի որ հո՞մ տեսնէին մասնաւոր մտաւարական կեան-
 քի կարողաւորք մը ջարդարանքը՝ ամէն բաղաբաղիթու-

թեան բանդիչ իշխանութեան մը ձեռքով. կ'ուզէի նկա-
 տի անկէն սա կէտը որ եթէ մարդիկ սպաննեցին, կրննր
 ճեղքեցին, երախաներ յօշոտեցին, ուզեցին նաեւ Մտա-
 ծումը ջնջել, զարոցներ այրեցին, եհեղեցիներու եւ վան-
 քերու պատկառելի կերտուածքը կործանեցին, ե փճացու-
 ցին ձեռագիրներ որոնց մէջ զարեթ է վեր կ'անդրէր ցեղի
 մը հոգին:

ԱՐՇԱԿ ԶՊՊԱՆԵԱՆ

ՎԵՐՉԱԲԱՆ Պ. ԱՆԱՆՈՒ ՅՐԹԵՆՈՒ

Տիկիւններ եւ պարաններ

Չեր զգածմանց թարգմանը կը հանդիտանամ շնոր-
 հակալութիւն յայտնելով Պ. Արշակ Զօպանեանի՝ որ
 մեզի ճանչցաց հայ մտքին ընթացքը զարեթն մէջէն, ե
 ծափահարելով իր վեհանձն ու գիտուն պերճաստու-
 թիւնը:

Պարոն,
 Մարտիրոսներու արեւը ի գուր աղանդակած պիտի
 չըլլայ՝ Ուժ մը կայ ձեզի հետ, ջրուած բայց հօօր, — վե-
 հանձն արմերուն եւ ազնիւ մարերուն համակրութիւնը
 կատարութեանց խնդարեղորէ, պեճութեանց քաղ-
 նախաա կիմքերը պաշարուած են ստուերով՝ Սը զոր Սե-
 զի տրուած չէ թափանցի: Առանց սին իւմքեր՝ նե-
 մեղո՞ւ նոյ բարձր աղջամուղջներուն Վրոյ, ճիտի ընենք
 միայն թէ այն օրն ուր Ֆրանսա, իր սխախնիւն համար
 շափազանց պատժուած, զաղբեցնմ ըլլալէ խորհրատուն
 որուն Եւրոպա կը հետեւեր, այդ օրը՝ արդարութիւնն ու
 Նարդիկութիւնը չափած ըլլալու են (1)

Այն բանաստեղծութիւնս հայերէնի թարգմանելով յա-
 տարութիւնը շունամ զայն մեր հասարակութեան ներկա-
 յացնելու իբրեւ քննական մանրակրկիտ ուսումնասիրու-
 թիւն մը: Ասիկա պարզ ու արագ համապատկեր մըն է,
 որուն մէջ առաջադրած եմ՝ լայն գծերով ու մանաւանդ
 տաք գոյներով՝ ֆրանսացի հասարակութեան ճանչնել
 մեր ազգին նկարագիրը, անցեալին ու ներկային մէջ, իր
 պատմական ու մտաւարական արտայայտութիւններով:

(1) Որովհետեւ զանազան կողմերէ մեք զիմուներ
 կ'ըլլան Արշակ Զօպանեանի բանաստեղծութեան ֆրան-
 սերէն բնագիրը խնդրելով, հարկ կը համարինք յայտնել
 թէ այդ գիրքը (L'Arménie, son Histoire, sa Lit-
 térature, son Rôle en Orient.) ունենալու համար՝
 մէտք է գիմել հրատարակիչ տան, Mercure de
 France, 15 Rue de l'Echaude-Saint-Germain,
 Paris. Դին 1 ֆրանք: Եոյնական յիշեալ հասցէին պէտք է
 գիմել Զօպանեանի միւս ֆրանսերէն հրատարակութեանց
 համար:

իմ նպատակս էր գաղափար մը մկեթֆրանսական վրտքին մէջ եւ այդ գաղափարն ընտելացնել մանաւանդ ֆրանսա- ին ժողովրդին ամէնէն թանկագին շարժմէն ազնիւ մասին, ֆրանսական մտաւորականութեան Գոլթ Հայցելու տեղ, կ'ուզէի յարմար պահանջել մեր ցեղին համար: Երջան- կեմքինն ունեցայ փափկեցս յաջողութեամբ պատկուած տեսնելու: Պրանսական արդի գրականութեան ռոմէնէն փափուկ գրագէտը, Անաղու Յրանս, Հաճեցաւ զնա հա- տել իմ ջանքս: Պրանսացի այբորուպն ամէնէն մե պը- ճախօսը, Ժան Ժոզէ, բանախօսութեան արարմին ե- կաւ ինծի յայտարարել թէ այլ կ'ստարբեր գոյնով քե պ- ւելի շահեկան կրեւոյթով մը կը թեւնէր հայկական խը- դիրը: Եղջնը հաստատեցին Անաղու Լրուուա Պարիզ, Միլոան, Վիլիանի, Լիսեկն Տէքալ, Շառլ Մոսս, եւ, որոնք ներկայ էին. յոյն ցեղը ֆրանսական ոտամին մէջ բարձրորէն ներկայացնող նուրբ գրագէտ մը, Ժան Բաիչ քառի, երեկոյթին հետեւեալ օրը կը գրէր ինծի. «Դեռ ազգեցութեանը տակ եմ ձեր բանախօսութեան: Չեր լե- գուն շատ զեղեցիկ է, եւ տաւորութիւն գործող բառը զանի զիտէր: Ինծի շատ բան սորվեցուցիք, եւ մեզի կարգացիք բանաստեղծական մեծ շունչով կատրոնը, կ'ըն- Բարիզի բոլոր կարեւոր թերթերը՝ այդ բանախօսութիւնը յիշելով տարածել ուղած գաղափարս շեշտած էին. հոս կը թարգմանեմ միայն «Թան»ի յօդուածին մէկ մասը. «Պ. Արշակ Չօպանեան որ զեռ երիտասարդ մըն է եւ որ մեր լեզուն հիանալի կերպով կը խօսի, ապացուցուց որ Հայերը, — այդ փոքր-Ասիոյ Յոյները՝ — պէտք չէ որ մեզ շահագրգռեն միայն իրենց գծրաղութիւններով, այլ նաեւ իրենց քաղաքակրթիչ ազգի պնտմական զերմէ, Ի- րենց զբաղեանքով, իրենց կրօնաւորներով:» Եւ երբ գրեք ձեռով հրատարակուեցաւ բանախօսութիւնը եւ զը- կուեցաւ Բարիզի բոլոր կարեւոր անձնավորութեանց, ըս- տացայ Պրանսացի ամէնէն բարձր գրագէտներէն (Լէոն Տիէքս, Բու Առախիզ, Հանրի Լալտան, Պրանսուա Գուէ, Բոյ Առան, Անտոէ Թուօրէ, Կաստիւ Բպոս, Ռեմի սը Կրուսոն) Ժիլ Ռընաու, Ժիլ Գլաուի, եւ այն) քար- տեր եւ նամակներ, որոնցմէ մէկ բանին կը յիշեմ. «Շնոր- հակալ եմ, կը գրէր Ժոսփ Ռօտէնպաք, որ զրկեր էք ինծի ձեր Հայաստանը, ուր այնքան հրապոյրով, թափան- ցողութեամբ ու տաք բոցով արտայայտած էք հողին այդ ժողովրդին զոր գեղազուութիւնը նուիրազործեց:» Ռօնի կը գրէր հետեւեալ նամակը. «Շնորհակալ եմ այդ գրքին համար ուր մեզի կը յայտնէք, հմայիչ ու թելադրող էջե- րով, արուեստը, իմացականութիւնը, կարողը, քաղաքա- կրթական բարձր կարողութիւնները այդ հայրական գե- ղեցիկ ցեղին, որոնք ուղղուեցան մեր խանգաւառութիւն- ները ք մեր զայրոյթները ու մեր բարեկամ տրտմութիւն- ները, այս պժգալի շրջանին մէջ ուր Եւրոպան այնքան վատ գտնուեցաւ ձեր եղբայրներուն ահաւոր հալածմանը, սպանմանը, խոշտանգմանը առջեւ:» Վերջապէս, Պրան- սոյի ամէնէն զուտ մտաւորական գրագէտներէն մէկը, Սլեֆան Մալաուս, որ ապամանկ երկարը կը գրէր, որմէ քաւի թանկագին վարձաքրութիւն երբեք պիտի

չպահանջ կեանքիս մէջ իմ ճիշդբարեփոխարէք. ՅԱրեւ- նի լնէ մը որ զնա ցուրը կը կարծրցնէ ձմէն ժամանակակից մտեմտող ճակատ՝ մեզի անծանօթ բովանդակ բանամտող, ծորթիւն մը մեզ ճանչցնող այս մարդը զմեզ հանած ըլ- կայնիկ ինծի կը թուի գրեմիւն մարդու: Որ ամէնէն արդի- նաեմք եւ ամէնէն փափուկ բարեպաշտութիւնը՝ հանդէպ աւերուած, շնախարհուած եւ աշուպիսի սղուսներով վերա- ծնելու պանթրանս իր հայրենիքին է»

Մեծ Պրանսացիներու կողմէ ուղղուած այս քա- ջալեցմական ցիցները կը յիշեմ, ոչ թէ ու եւ անձ- նական գոհացում զանելու համար, այլ որովհետեւ ինծի կը թուի թէ այդ ներբողները կը վերաբերին Հայ ժողովրդին, անոր մեծարելի յագիւլութեանց, անոր սր- կուն առաքինութեանց որոնց խանարհ ներկայացնող Կ- ջայ միայն: Այս կարեւոր հարմարութիւնները երեկոյ կը զգայի միանգամայն՝ զգացնելու համար թէ որքան բան կայ ընտելք, մասնաւորապէս Պրանսայի եւ ընդհանրապէս Եւրոպայի մէջ, մեր ժողովուրդը քաղաքակրթ մշտար- հին ճանչցնելու ուղղութեամբ:

Այս փորձը — Տիգրան Երկաթի զեղեցիկ յօդուած- ներուն հետ — նմանապէս մըմ էր ըսկի Եւ Փրանսական հասարակութիւնը ամբողջ շէնքին կը մնայս: Մեզի կը մնայ մէկ կողմէն իննմով ու զիտակցութեամբ կերտել զայն, — եւ կը մաղթեմ որ բազմաթիւ ըլլային այդ զր- ուածին ու փափուկ գործին աշխատող ձեռքերը, — ու միշտ կողմէ մեր մտաւորական ումին նորանոր յայտնու- թիւններով, մեր ազգային կեանքի ուշիմ ու կորովի գե- կավարութեամբ՝ ապացուցանել Եւրոպային ինչ որ մեր գրքերը, մեր յօդուածներն ու մեր բանախօսութիւնները պատմեցին:

Բարեկ, 1 յուլիս 98

Ա. Չ.

ՔԱՄԱՆԱԿԱՆԻՑ ՊԱՏՄԱՌՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժ.

1891—1894

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՉՆՉՈՒՄԸ

Աշրգեան խորէն պատրիարք հրաժարականին զրակ յամառած կը մնար. սուլթանն ալ կը յամառէր զայն չըն- դունելու: Կրօնական եւ քաղաքական ժողովները կը շա- րունակէին իրենց նիստերը ընել նախագահութեամբ Կրօ- նական ժողովին ատենապետ Գրիգորիոս եպիսկոպոս Յով- հաննէսեանի: Երբ պատրիարքը գնտակահար եղաւ, քա- ղաքական ժողովը մէկէն ի մէկ սթափեցան. վարչութեան անդամները վախցան թէ Պոլիս յեղափոխական կազմա- կերպութիւն մը պաշտպան կանգնած է ազգային իրաւունք- ներուն, ու լքելիսն զիր պիտի ըլլայ օրէնքի բնաբարու-

մին: Վարչութիւնը այդ երկիւղին տակ սկսած էր ազգին սիրտը շահելու միջոցները խորհել, բայց ոստիկանութեան նախարար Նազըմ պէյի տուած ապահովութիւնն ներուն վրայ Սիմոն պէյ նորէն շարունակեց ան ճպարհան ուսկից կ'ընթանար երեք տարիէ ի վեր:

Չորս տարուան միակեծան պաշտօնավարութեամբ մը Նազըմ պէյ կարծած էր, կամ թէ կ'ուզէր կարծեցնել որ Պոլիս յեղափոխական մարմին գոյութիւն չունի: Պատրիարքը սպաննել ուզող Յակոբը անհատ մըն էր, եւ ոչ թէ յեղափոխական մարմին մը անդամը: Կիպրոսէն ելած ե. կ'ած էր ինքնազուլս գործ մը ընելու, ու թէպէտ Հնչակեան մըն էր, ըստ իր յայտարարութեան, բայց Պոլիս Հնչակեան մարմին մը չէր անդամակցեր, այդպիսի մարմին մը գոյութիւն չունենալով: Ոստիկանութեան նախարարին անձնասիրութիւնը եւ շահերը կը պահանջէին որ այս օրինակ լաւատես ենթացողութիւններով հանդատացնէր թէ՛ սուլթանը եւ թէ ամբողջ Պոլիս: Յայտնի չէ թէ իր ըսածներուն կը հաւատար թէ ոչ. ամէն պարագայի մէջ սակայն Նազըմ պէյ եթէ Պոլիս յեղափոխական մարմին մը գոյութեանը կասկածները ունեցած ըլլար իսկ, բայց եւ այնպէս՝ ո՛ր եւ է հետք գտած չըլլալով, պարտաւոր էր հաւտացնել թէ մայրաքաղաքը յեղափոխական ազդեցութենէ ազատ է: Ոստիկանութեան տուած ապահովութիւնն ներէն սիրտ առնելով Սիմոն պէյ ա'լ չընդեցաւ իր սայթաք ընթացքէն:

Եւ սակայն Յեղափոխութիւնը կը հսկէր: Հնչակեան Ազգային-Յեղափոխական կուսակցութիւնը 1890ի դեպքերէն յետոյ Պոլսոյ մէջ կազմալուծուած կը համարուէր: Մահ, բանա, աքսոր, տարապրութիւն ցիր ու ցան ըրած էին այն խումբերը որ 1890ին միանալով՝ ազգային շահերուն եւ իրաւունքներուն պաշտպանը հանդիսացած էին. բայց խմորը կը մնար. վերջին տարիներու վէպերը այդ խմորը ուռեցնելու նիւթերը պատրաստեր էին:

Հայ ժողովուրդը 1894ին իր պատմական կեանքին հոգեկան էն վտանգաւոր ժամերուն մէջ կը գտնուէր: Բանաստեղծին նկարագրած հիւանդն էր կարծես, որուն ցաւին վրայ միշտ ցաւ մը կը բարդուի, ու դարմանէ ա'լ յուսաբեկ վերմակը կը քաշէ վրան, ու կը սպասէ մահուանը. անզգայ մըն է ա'լ: Չորս տարիներ անցած էին Գուլ-Գարուի մեծ ցնցումէն յետոյ, ու հայ ժողովրդին ցաւին վրայ ցաւը կը բարդուէր: Թիւրքը այլ եւս մուլթի մէջ չէր որ խեղդամահ կը սպաննէր Հայը. խաւարին մէջ գործուած ոճիր մը գտնէ եղեռնագործին վախը կը հաստատէ. թիւրք իշխանութիւնը Հայաստան արձակ համարձակ կախազանին վրայ կը նահատակէր Հայը: Ինչպէս երբեմն Արաբացիները մեզի խումբ խումբ կը գերեզմարէին, սուրբերնիս շղթայի զարկած, հիմա օսմանեան իշխանութիւնը խումբ խումբ կը գերեզմարէր Հայերը, սուրբերնիս շղթայակիր: Արաբացիները շուկաները իբր վաճառք կը տանէին Հայերը. իսկ այժմ՝ Թարապուլուս, Փէզան, Աքեա, կորսուելով կը զրկէին: Անտարքեր հանդիսատես մըն էր քրիստոնեայ Երուսալմ: Ու պատրիարքարանը ո՛չ միայն թեթեւ տրտնջի մը հծծիւնը անդամ չէր լսեցներ այլ եւ կը ջանար Մահամապրութեան դադարումովը արզիլել նոր վարչութեան մը ընտրութիւնը, վասն զի կարելի էր որ նորընտիր կրօնական ու քաղաքական ժողովները

թարգման հանդիսանալով ազգային-զգացունեներուն, Պատրիարքարանին՝ թիւրք կասալարութեան դէմ՝ պատախազի պաշտօն տային: Քաղաքական ժողովը որուն դէմ զրգուած էր ազգը, կը շարունակէր իր ապօրէն պաշտօնավարութիւնը: «Որքան ատեն որ այս սուլթանը կ'ապրի ես ալ վարչապետ եմ» կը յայտարարէր Սիմոն պէյ. պատրիարքը՝ իմաստակութեան մը կախմանով, կը դրժէր Սահմանադրութեան վրայ ըրած սրբութեան երդումը: Կրօնական ժողովը կը մեղսակցէր այս պաշտօնը: Եթէ օրէնքին հպտակելով կրօնական ժողովը այլ եւս չշարունակէր նիստ ընել, քանի որ իր պաշտօնավարութեան սահմանադրական երկամեայ շրջանը լրացած էր, ո՛չ պատրիարքը ո՛չ Քաղաքական ժողովը պիտի համարձակէին իրենց ապօրինաւոր ընթացքին մէջ աւելի առաջ երթալ: Լուս կը մնար Յեղափոխութիւնը որուն վրայ ազգը անխնայ յոյսեր դրած էր: Խոր թախծութեան մէջ յանկարծ լոյս մը փայլած էր, պատրիարքին դէմ արձակուած գնտակը. թըշնամիներէ պաշարեալ քաղքի մը տրուած յոյսի նշանն էր ատիկա թէ օգնութիւնը մօտ է, բիշ մըն ալ դիմանալու է:

Այդ օգնութիւնը հասաւ. 1894 մայիս 10ի առտուն յանկարծ Սիմոն պէյի զարնուելուն լուրը տարածուեցաւ խալիբար խանի սանդուղներուն տակ երկու Հայաստանցի իրենց անձնազուլսութեամբը ազգին կը վերագարձնէին իր իրաւունքները:



Կ. Պոլսոյ Հնչակեան Մասնաճիւղը չէր ջնջուած. 1890ի կազմակերպութիւնը, թէեւ շատ տկարացած, բայց կը շարունակէր իր գոյութիւնը: Վարչական մարմինը գրուշաւոր ընթացքի հետեւելով չէր ուզած ո՛ր եւ է գործ ընել յաջողութեան մասին առանց կատարելապէս ապահով ըլլալու: Թիւրքիոյ մէջ Հայոց յեղափոխական ո՛ր եւ է ձեռնարկ պէտք է անպատճառ առաջադրած նպատակին հասնի, ապա թէ ոչ աղիտաբեր կ'ըլլայ ազգին եւ անպայման կերպով կը ծանրացնէ ժողովրդին թշուառութիւնը: Յաջողելու համար պէտք է որոշ նպատակ մը ունենալ, անոր հասնելու միջոցներուն ընտրութեանը մէջ շըրխալիլ, եւ վստահ ըլլալ հանրային զգացումին աջակցութեանը:

Կ. Պոլսոյ Հնչակեան վարչութիւնը յաջողութեան այս երեք պայմանները կատարելապէս ապահովուած ըզգալէ յետոյ միայն գործելու ժամը հասած համարեց:

Հնչակեան ծրարին կը չզայլի պատրիարքին, գիտնալով որ խորէն պատրիարք պարգապէս վարչութիւններու անսացող պաշտօնատար մըն է. անոր տապալումը չէր կրնար կացութիւնը փոխել, ինչպէս որ փորձով ալ տեսնուեցաւ պատրիարքին հրաժարելէն ետքը, մարտէն մինչեւ մայիս. սակայն Յակոբին ինքնազուլս գործը որով Աշըգեան հրաժարեցաւ, Հնչակեան ծրարին գործադրութիւնը յետաձգեց՝ առանց ջնջելու անոր կարեւորութիւնը: Այս միջոցին եթէ Սիմոն պէյ հեռատես գտնուելով, եւ սենց նաև բաւական ալ քաջասիրտ, հրաժարէր, եւ երեսփոխանական մարմինը գումարել տար նոր վարչութեան մը ընտրութեանը համար, անտարակոյս իրեն դէմ ո՛ր եւ է ահաբեկիչ դործողութեան հարկ պիտի չի մնար:

Սիմոն պէյ սպաննուեցաւ ոչ թէ իբր հակաթուրք

քաղաքականութեան մը չհետևող, այլ իբր ազգային իրաւունքներուն, շահերուն, օրէնքներուն դէմ դաւող մը Ազգային ժողովը երբ 1891ին զինքը վարչութեան անդամ ընտրեց՝ անշուշտ պատրիարքարանին քաղաքականութիւնը հակաթրքական ուղղութեան մէջ գնելու նպատակաւ չէր։ Սիմոն պէյ հանրածանօթ անձնաւորութիւն էր, երեսփոխանական մարմինը անոր անցեալն ու ներկան աղէկ կը ճանչնար, ու անոր քաղաքական հայեացքներուն կատարեալ գիտակցութեամբ պաշտօն կը յանձնէր, ու Սիմոն պէյին տրուած պաշտօնակիցներն ալ կը պատկանէին քաղաքական միեւնոյն դպրոցին։ Ազգին օրինաւոր երեսփոխանութենէն բզիւած ընտրութիւնը պէտք էր յարգել, ու ազգը համակերպեցաւ։ Բայց Սիմոն պէյ շուզեց մինչեւ իսկ փորձել Դրան հետ հաշտարար քաղաքականութեան մը հետեւելով պաշտպանել այն իրաւունքներն ու շահերը որոնց աւանդապահ ընտրուած էր. ընդհակառակը ոչ միայն կառավարական ծրագիրներուն զրկաբաց ընդ առաջ գնաց, այլ եւ ըրաւ այն ամէնը զոր իշխանութիւնը չէր սպասեր իսկ։ — Պատրիարքարանը գրեթէ միշտ կառավարական պաշտօնատարներու վարչութեան ներքեւ գտնուած է, բայց այդ պաշտօնատարներէն շատերը, կըրնամ ըսել ստուար մեծամասնութիւնը, ազգային իրաւունքներուն ու շահերուն արոյշեանը կանգնած են Դրան հանդէպ, ընականաբար ճարպիկ քաղաքականութեամբ մը որ տարբին դիւրաթեքութեան մէջ ներքնապէս հաստատաւոր կը մնար։ Սիմոն պէյ ամիրայական տան մը շարունակութիւնը, անձնապէս հարուստ, եւ ոչ ալ կառավարական պաշտօնեայ, կարող պիտի ըլլար հաշտարար բայց կորովալիք ուղղութեամբ մը թէ՛ իր ազգին մեծ ծառայութիւններ մատուցանել եւ թէ՛ կառավարութեան, հետեւելով Սերովիչէնի, Օտեանի, եւ անոնց նմաններուն օրինակին. բայց Սիմոն պէյի կը սպասէր այն մտաւոր եւ բարոյական կարողութիւնները որոնցմով օժտուած էին այդ անձնաւորութիւնները։ Չսխալելու տպահովութիւնը պարկեշտութեան մէջ պէտք էր փնտռեր։

Սիմոն պէյի մեծ սխալներէն մէկը եղաւ պաշտօնին շարունակութեանը հետապնդիլը, սահմանադրական շրջանին լրանալէն ետքը։ Վերջին տասը տարուան մէջ երեք անգամ վարչապետութեան կոչուած էր, 83էն 85, 87էն 89, եւ 91 ին. հրաժարելով 93 ին հաւանօրէն 95 ին պատրիարքարան կը վերադառնար։

Այս սպանութիւնը ոչ միայն Հայոց այլ նաեւ Թիւրքիոյ բրիտանոնեայ եւ իսլամ ժողովուրդներուն վրայ փրկարար տպաւորութիւն ըրաւ. ամենքն ալ զգացին թէ հարուածը ուղղակի Երլաքըին կը տրուէր, եւ թէ բնականութեան դէմ «Ալ կը բաւէ» գոչող ձայն մը կը բարձրանար։ Հայ ժողովուրդը Թիւրքիոյ փրկիչը նկատուեցաւ։ Պաշտար ուզեց չափաւորել հարուածին բարոյական ազդեցութիւնը. ոստիկանութեան նախարար Նազըմ պէյ փոխանակ պաշտօնանկ ըլլալու, փաշա տիտղոսը ստացաւ. սուլթանը չէր ուզեր ճանչնալ յեղափոխութեան գոյութիւնը Պալիս։

Աշըգեան Խորէն պատրիարք Մաքրի գիւլ իր տունը փակուած, Մադսուտ Սիմոն էյ Օրթապեղ անկողինը պտուկած, պատրիարքարանը կը մնար անպոկս։ Կառավարական հրամանով կրօնական եւ քաղաքական ժողովները շարունակեցին գումարուիլ եւ տնօրինել ընթացիկ գործերը։ Սուլթանը կը մեր էր տեղի տալ Յեզափախութեան օրինաւոր պահանջումներուն առջեւ, սակայն ո՛չ պատրիարքը, ո՛չ վարչապետը՝ հրապարակեցաւ, յանձնառու եղան իրենց պաշտօնին շարունակութեանը։ Կացութիւնը օրէ օր կը կնճռոտէր երբ յեղափոխական միջամտութիւն մը խնդիրը լուծեց։ Աշըգեան Խորէն պատրիարքը հրաժարեալ նկատելով անոր անունը՝ այլ եւս պատարադին մէջ չյիշատակելու հրամանագրեր ցրուեցան եւ կեղեցիները Հնչակեան կնիքով։ Ազգին հինաւորոյ իրաւունքին գործադրութիւնն էր. Հայ ժողովուրդը իր պատրիարքները կը տապալէր «Չյիշուի»ով. Սահմանադրութիւնը այդ իրաւունքին դրժարութիւնը օրինական շրջանակի մէջ առած էր. հանրային պահանջումին թարչմանը երեսփոխանական մարմինն էր. Սահմանադրութեան խմբագրուելէն յետոյ ժողովուրդը «Չյիշուի» իրաւունքին թիւ անգամ դիմեց, ան ալ կրկին կառավարական բռնաբարութեան հետեւանքով ինչպէս երբ Ալի փաշա ուզեց Պոլսոյ պատրիարքը պահել, հակառակ ազգային պահանջումներուն։ Դուռը արդիւիւրով Ազգային ժողովին գումարուածը, եւ միանգամայն պատուհասելով եկեղեցիներու մէջ պատրիարքին դէմ ո՛ր եւ է ցոյց, պարտաւորեց Հայ ազգը իր իրաւունքին գործադրութիւնը սպասել իր կազմակերպուած ուժէն որ կը մարտնչար յեղափոխութեան մէջ։

Հնչակեան հրամանագրերը Պոլսոյ եկեղեցիները յանձնուած էին երկու օրուան մէջ, ինչ որ նոր հարուած մըն ալ կուտար Նազըմ փաշայի ստատիկանական ենթադրեալ հնարամտութեան։ Պալիս տպուութիւն եւ միանգամայն հիացում արեց. արեւելեան երեսակայութիւնը շուրջաւ անհերեւոյթ վարչութեան մը ուժին վրայ։ Հայ եկեղեցականութիւնը հակառակ կառավարական ճնշումներու եւ սպառնալիքներու միտքան ներդաշնակութեամբ խոնարհեցաւ Հնչակեան հրամաններուն առջեւ։ Սուլթանը հաստատաւոր քաղաքականութեամբ շարունակեց իր ընդդիմադրութիւնը։ Երլաքըի պալատին եւ Հնչակեան կուսակցութեան միջեւ մենամարտը կը մղուէր. անհամբեր ելքին կը սպասէին օսմանեան կայսրութեան ժողովուրդները ու Եւրոպան։ Սուլթանը տեղի առաւ։ Ուժը երկրին միակ օրէնքը հռչակած էր. իր գէմն ալ ուժ գտաւ։ Հնչակեան կուսակցութիւնը ազգային իրաւունքներուն յաղթանակը ապահովեց առանց արին թափել տալու, միայն ազգին հոգեբանական կացութիւնը լաւ հասկնալով, ու միանգամայն Երլաքըին տկար կողմը զգալով։ Ֆրանսայի Հանրապետութեան նախագահին մահը յունիսի մէջ, այս յաջողութեան նպաստող պարագաներէն մէկը եղաւ։

* * *

Աշրդեան պատրիարքին հրաժարականը վերջնական իրողութիւն մը բլլալէ յետոյ խառն ժողովը պատրիարքական տեղապահ ընտրեց Գիմարեան Հմայեակ եպիսկոպոսը: Եոյն տարուան զեկտեմբերի վերջերը Ազգային ժողովը գումարուելով Իզմիրեան Մատթէոս եպիսկոպոսը պատրիարք ընտրեց, եւ անոր բող զրաւ Քաղաքական ժողով մը որուն մէջ կառավարական ո՛ր եւ է պաշտօնեայ չէր գտնուեր: Կրօնական ժողովը կազմուեցաւ մեծ մասամբ պատրիարքին անկեղծօրէն աջակցելու յատկութիւններ ունեցող եկեղեցականներէ որոնց զլուին Լր Ալեքսանդրի Գրիգորիս եպիսկոպոս: Հայ ազգին համար նոր թուական մը կը բացուէր. Հայաստանի բարեկարգութիւններու հարցը Եւրոպայի Լն կարեւոր ինչպիսիք եղած էր Պատուի կոտորածովը:

* * *

Հոս կը վերջացնեմ այս սրտմական ծանօթագրութիւնները: Գեո շատ կանուի կը համարիմ Իզմիրեան պատրիարքին պաշտօնավարութեան ժամանակամիջոցին վրայ խօսիլ: Մինչեւ իսկ թէեւ 1885էն 1894 թուականը իբր պատմական անցեալ մը միայն կրնայ նկատուիլ, բայց եւ այնպէս զեո կարգ մը զգուշութիւններու պարտ սկանութիւնը անխուսափելի էր:

Այս ուրուագծին նպատակն էր հայ ժողովրդին ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալ երեւոյթին վրայ: Հայոց պատրիարքարանը տասը տարի շարունակ, Հայ ազգին երեսփոխանական ժողովին հաճութեամբը, պահպանողական ու թրքատէր պատրիարքներու եւ վարչութիւններու բացարձակ իշխանութեանը տակ մնաց. նոյն իսկ 1889-91ի ազատական վարչութիւնը հակաթրքական քաղաքականութեան հետեւող չէր այլ պարզապէս ուղղամիտ մարմին մը որ ուզեց ազգին շահերը օսմանեան օրէնքներով արդարութեամբ պաշտպանել: Եւ սակայն այդ թրքատէր պահպանողական տասնամեայ անընդհատ պաշտօնավարութիւնը ճիշդ այն արդիւնքները տուաւ որոնք անհաճոյ կին եւ անսպասելի թէ՛ օսմանեան կառավարութեան, թէ՛ թրքատէր կուսակցութեան: Յարութիւն պատրիարքով եւ Եւրոպեան ԼՖէնտիով 1885ին սկսուած եւ Աշրդեան Խորէն պատրիարքով ու Մագսուտ Միմոն պէյով 1894ին վերջացած քաղաքականութիւնը հետեւեալ արդիւնքները տուաւ.

Ա. Օսմանեան իշխանութեան ատելի ու Երուսաղէմ աքսորուած Խրիմեան Հայրիկը ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուեցաւ:

Բ. Մահմանազրութիւնը որուն ջնջումին կը հետամտէր կառավարութիւնը, եւ որ 91էն ի վեր զազարման դատապարտուած էր, վերակենդանացաւ:

Գ. Դոնէն 1891ին եւ ոչ իսկ իբր կրօնական ժողովին անդամ վաւերացուող Իզմիրեան Մատթէոս եպիսկոպոսը թիւրքիոյ Հայոց պատրիարք ընտրուեցաւ:

Դ. Դոնէն 1891ին եւ ոչ իսկ կրօնական ժողովին անդամ վաւերացուող Ալեքսանդրի Գրիգորիս եպիսկոպոսը կրօնական ժողովին ատենապետ ընտրուեցաւ, ու բիշեպն ալ կիլիկիոյ կաթողիկոս:

Ե. Օսմանեան կառավարութեան ծառայող Հայ պաշտօնեաները պատրիարքարանի գործօն ժողովներէն վտարուեցան:

Զ. Ազգային իրաւունքները և առանձնաշնորհութիւնները վերակենդանացան:

Է. Հայկական հարցը՝ որուն Եւրոպայի ինչպիսիք օրակարգէն ջնջումին կը հետամտէր Դուռը, Եւրոպայի արեւելեան ամէնէն մեծ ինչպիսիք եղաւ, եւ Հայաստանի բարեկարգութիւններու ծրագիրը պատրաստուեցաւ երեք պետութիւններու պաշտպանութեամբ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Վ Ե Ր Զ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Տ Ի Ա Ր Պ Է Ք Ի Ր

Տիարպէքիւրէն կը գրեն մեզի յունիս 1 թուականով.

Հացին օխան 32 փարա է այս օրերս, և ցորենին օւշակը 12-13 դրէ: — Անցեալ շաբթու շորս օր անձրեւ տեղաց, որով զիւղացիները յաջողեցան կորեկ ցանել:

Տեղական կառավարութիւնը, թիւրք խուժանին բողոքներուն վրայ, արգիլած էր տեղւո ցորենի արտաճումը Մուսուլ, Տիգրիսի վրայէն լաստերու միջոցաւ: Այդ միջոցին էր որ կառավարութիւնը գրաւեց մէկ քանի հայ վաճառականի ցորենի մթերքը եւ իր որոշած գնով ծախել տուաւ լոկ իսլամներուն, մինչդեռ անպիսի ցորենի ահագին մթերք ունեցող խոշոր թիւրքերը զերծ կը մնային այս բռնութենէն: Այդ թիւրքերը, Արիֆ, Ճէմիլ, Պէքիրեայլն, փորձեցին 300 սակի կաշառքով կուսակալէն արտօնութիւն առնել Մուսուլ ցորեն զրկելը շարունակելու: Առջի սերան չյաջողեցան. սակայն կ'երեւի թէ այս օրերս հասած են իրենց նպատակին, որովհետեւ ցորենի արտաճման արգելքը վերցաւ:

— Տիարպէքիւրէն գաղթողները սկսան վերադառնալ: Անցեալ շաբթու Ամերիկայէն, Անգլիայէն, Եգիպտոսէն եւայլն ընտանիքներ դարձան: Չորս օր բանտը սպասելէ յետոյ, երաշխաւորութեամբ արձակուեցան:

Բանտապետ Օսման պէյը մեռնելով, իրեն յաջորդեց այն վայրենին որ շարգերուն ատեն այլ պաշտօնը կը վաբէր արդէն եւ որուն քստմեղի արարքները այն միջոցին սխուր հոշակ մը տուին իրեն:

Ջարդէն ի վեր, Ալ-Թէփէի Ապտիւլղասաէր Շէյխին բող տասը տարեկան հայ աղջիկ մը կար Քարիս դեղէն գերի տարուած: Անցեալ շաբթու, եղբայրը, առ երեսու իսլամութիւն ընդունելով, ազատեց զանի:

— Տիարպէքիւրի բոլոր Հայերուն սիրտը կ'արինի այս միջոցին, հանդիսատես բլլալով հոշակաւոր Մակաբայեցւոց վանքին Ասորիներու ձեռք անցնելուն:

Մակարայեցոց վանքը կը դառնուի բաղաձայն 17-18 ժամ հեռու գէպի արեւելք Լճի հողին վրայ: Ըստ աւանդութեան՝ Թաղեոս առաքեալ հիմնած ըլլալով զայն, Առաքելոց վանք եւ կը կոչուի: Հոյակապ հնութիւն մըն է, 2,000 ոտքէն աւելի բարձր լերան մը վրայ կառուցուած, չորս կողմէն ամրակուտ պարսպով: Զարդին ատեն այդ վանքին մէջ ամրացած էին հինգ-վեց հարիւր երիտասարդ: Մէկ քանի օր զիմադրելէ յետոյ, ստիպուեցան անձնատուր ըլլալ, նախ ջրի պակասութեան պատճառաւ, յետոյ մտահելով բարբարոսներուն երդումին: Երբ տաճարին զոնները բացին, իսլամ խաժամուժը ներս խուժեց եւ ոչխարի պէս ջարդելէ ու կտորելէ յետոյ խեղճ քրիստոնեանները, աւարի տուաւ վանքը:

Այդ աղէտքէն ի վեր, Մակարայեցոց վանքը անբակ կը մնար իր հարիւրաւոր նմաններուն պէս:

Բայց ահա Ասորիներու նոր կաթողիկոսը, որ նենգութեամբ ու կաշառքի շնորհիւ ձեռք բերաւ իր պաշտօնը, խորհուրդ յղացած է մեր վանքը վերաշինելով՝ տիրանալ անոր: Ասոր համար, յաջողած է սկիւղով որոպ վանքի շրջակայ զիւրերէն Եասահիկի Եռուսեֆ քահանայ, Անթաղի Եռուսեֆ քահանայ, Պամթնէի Մուրատ քահանայ, Լճի միականի Մահմուտ նշանաւոր պէյը եւ Հազրոյի համբաւաւոր Սէպտին փաշան, խաթի պէյը ու միւտիրը, եւ անոնց պաշտպանութեամբ ձեռնարկել վանքին վերաշինութեան: Երեք ասորի վարդապետ եւ բնիկ տիրապէքիրցի Փալճի Սալիպա անուն անարդ քահանան վանքը կը մնան ոստիկաններով եւ կը հսկեն շինութեան: Ութ ջորի քար, կիր, ատաղձ եւ այլն կը կրեն. քառուսն քիլէ ցորեն աղաւ աւած են բանուորներուն համար:

Տիրապէքիրի առաջնորդ Եզեկիէլ վարդապետ կառավարութեան զիմելով՝ շինութեանց առժամեայ պաշարման համար հրամանագիր ստացաւ կուսակալէն և զրհեց Լճի միւտիրին: Մակայն միւտիրը, հրամանագիրը առանց իսկ կարգաւճ ոտքին տակ նետած է, պոռալով թէ «Այդ վանքը Ասորիներուն կը պատկանի. այդ երկիրը Ասորեստան է, Էրմէնիստան չէ. կուսակալէն ինձի հրաման եւ կած է, Ասորիները պիտի շինեն իրենց համար:» Նոյն յայտարարութիւնը կ'ընեն նաեւ յիշեալ բոլոր քահանայները եւ պէյերը:

Չմտնամ յիշել թէ այդ ասորի կաթողիկոսը կառավարութեան աչքը մտնելու համար Թիւրքերուն բոլոր հանգանակութեանց կը մասնակցի. անցեալները նորէն 4000 զրուշ տուաւ նորահաստատ Մլքթէպը Սէնայիին (արհեստական վարժարան) համար:

Երկու օր առաջ Եզեկիէլ վարդապետ կրկին զիմեց կուսակալին թաղրիրով մը, զարմանք յայտնելով որ մինչ իրեն հրամանագիր մը կը ստուէր՝ վանքին մէջ սկսած աշխատութիւնները զարդեցնող, միւս կողմէն Ասորիներուն ալ թոյլ կը տրուէր այդ աշխատութիւնները շարունակելու: Թագրիրը Մէճիսի իտարէին քննութեան յանձնուեցաւ:

Ֆալալին այն է որ Հայերը ի ձեռին չունին վանքին ֆէրմանը, որ աղէտքին ատեն այրած է:

Իբր թէ մեր ցաւերը մեզի չօղակին, այս Ասորիներն ալ նոր փորձանք մը ահա: Թիւրքերը կողոպտեցին ու այրեցին, ասոնք հիմա ամբողջովին տիրանալու ելեր են:

Այստեղ մեր ձայնը չելլեր: Բայց կը փափաքէինք պիտնալ թէ անգին ի՞նչ կը խորհի ընել կ. Պօլսոյ պատրիարքարանը, երբ մեր ազգային պատմական սրբավայրներն ալ, որոնք մեզի մնացած վերջին բարիքն են, այսպէս մեր ձեռքէն խլելու կ'ելլեն:



Այս սողերը զրած միջոցիս 500 հոգիէն աւելի առած Պէլէտիէն տարած են՝ ճամբաներու շինութեան համար: Ոստիկանները շուկաները ցրուած են, ո՛վ որ տեսնեն՝ խանութը թէ փողոցները՝ քաշելով քաշկրտելով, հայհոյելով ու անարդելով, կ'առնեն կը տանին, ըլլայ՝ իր պարտքը վճարած թէ չվճարած, որովհետեւ հրամանը խիստ է: Պահանջուածն է ինչը ասորուան տուրք, տարին 18 զրշ ողջ զրամ: Երկու հարիւր հոգի շաբաթ իրիկուն ոստիկանատան ախոզը պառկեցան անօթի:

ՆԱՀԱՏԱԿԻ ՄԸ ԵՂԲԱՅՐԸ

Խ Ա Ր Բ Ե Ր Դ

Անգլիական «Բոք» հանդէսին յուլիս 8ի թիւին մէջ հրատարակուած կը գտնենք Խարբեղէն Պատ. Պարնըմի մէկ նամակը անգլիացի երէցի մը՝ հայ որբերուն կացութեան մասին:

... Բաւական թուով որբերու հոգ կը տանինք զորոնք տեղաւորած ենք զիւրերը մասնաւոր ընտանիքներու մէջ, բայց այս զրուծիւնը գոհացուցիչ չէ, ուստի այս օրերս իսկ երկու տուն վարձեցի մօտակայ գիւղի մը մէջ և երկու բարի քրիստոնեայ կին կարգեցի իբր խնամածու, երկու էրիկմարդ ալ աշակից տալով անոնց, ու հիմակ այդ ցանուցիր տղաքները պիտի հաւաքեմ յիշեալ երկու տուններուն մէջ, ուր ճշմարիտ քրիստոնեայ Home (տուն) մը պիտի ունենան. և որովհետեւ ձեռ զրկած նուէրը (5 անգլ. սուկի) որոշ նպատակի մը յատկացուցած չէիք, այս գործին պիտի յատկացնեմ: Այս սողոց խնամատարութեան մէջ մեր գլխաւոր նպատակն է առտնին լաւ ազդեցութեան տակ պահել զիրենք: Գիտնալու էք թէ home բառը այս երկրին ոչ մէկ լեզուով կրնայ թարգմանուիլ, որովհետեւ իրն ալ ինքնին, այնպէս ինչպէս դուք ու ես կը հասկնանք, զոյութիւն չունի: Եթէ ինձի հարցուէր թէ այս երկրին մէջ միսիոնարական գործին արժէքին ամէնէն շօշափելի ապացոյցը ո՞րն է, մատնանիչ պիտի ընէի բազմաթիւ տուններու կերպարանափոխեալ նկարագիրը:

Խեղճ որբերուն մասին ըրածնիս կը հարցնէք: Անշուշտ կը յիշէք թէ ջարդերէն յետոյ մեծագումար զրամ զրկուեցաւ այստեղ ընդհանուր նպաստի համար, ու ստիկա բաշխուեցաւ ամէնէն աւելի չքաւորներուն, զանոնք սովամահ ըլլալէ ազատելով: Պաշարուած էինք անհամար անոք անօգնական էակներէ, որոնք քիչ շատ մշտական

աջակցութեան կը կարօտուին, ուստի այս դասակարգին համար դիմումներ ըրինք: Իբր ասորիսկէս առաջ նպատակները սկսան գալ, եւ գործը ընդարձակեցինք այնչափ աւելցնելով որչափ մեր միջոցները կը ներկին: Մեր միսիւնարական զաշտը ընդարձակ է, ու իր մէջ կը բովանդակէ Տիարսէքիթի, Արաբիի, Ահմայ եւ Մալաթիայի պէնքազարներ: Այստեղ վարձած ենք վեց տուն, որոնք շատ յարմար չեն, բայց լաւագոյնը կարելի չէր գտնել, եւ ասոնց մէջ 250 էն աւելի որբ սնինք: Հաշուելով նաեւ այն երկու որբանոցները որոնք մայիս 1ին պիտի բացուին յիշեալ Հոլաքէոյ (°) դիւղին մէջ, 16 ուրիշ որբանոց ալ սնինք, ընդամենը 550 որբով: Մալաթիա երկու տան մէջ կը պահենք 100 տղայ, որոնց հոգը մեր վրայ է, բայց տեղական կառավարութիւնը անարկութիւններ կը յարուցանէ այս դրութեան դէմ, ուստի Կ. Պոլսոյ անդլիական զեմպանալեան միջոցաւ դիմումներ ըրինք, ու հիմակ տրուելիք որոշմանը կը սպասենք: Ուրիշ տղաք ալ կը հոգանք մասնաւոր ընտանիքներու մէջ, այնպէս որ մեր խնամքին տակ գտնուող որբերուն թիւը 1000ը կ'անցնի: Ուրիշ հազարաւորներ կան նոյնչափ կարօտ, որոնց ուրախ պիտի ըլլայինք օգնելով, բայց արտասահմանէն մեզի կ'ազգարարեն որ գործերն իս չընդարձակենք, վախնալով որ հատոյթը կը պակսի եւ կը ստիպուինք բացը ձգելու անոնք որ այսօր կը հոգանք: Մեր հաւաքած որբերուն վրայ տեսած մեծ փոփոխութիւնն իս մեզի սքանչացում կը պատճառէ, եւ տսիկա աչքի առջեւ սնննալով կրնաք երեւակայել թէ ինչքան յոգնութիւն կուտայ մեզի կերպարանափոխել այսքան բազմաթիւ խեղճ եւ անող էակներ, որոնց ապրուստի միակ միջոցը մուրացկանութիւնն է եւ որոնք հաւանօրէն պատուհաս մը ըլլային աշխարհքի, փոխանակ մէջ մէկ օգտակար մարդ գտնուելու: Մեզի եկողներէն շատը այնչափ աղէտ ու անտաշ էին որչափ եթէ հեծանոսներու մէջ ծնած ըլլային, բայց հիմակ մեր մէջ այս տղոց չափ յուսալիր գաս չի կայ: Բոլոր զանոնք տեսնողները՝ փոփոխութեանը կը զարմանան, եւ ասիկա կը նկատենք իբր անտուածային օրհնութեան մէկ յատուկ ապացոյցը գործին վրայ, եւ իբր մէկ մասնաւոր գրաւականը Աստուծոյ հաճութեան: Մեր գործունէութեան ոչ մէկ ճիւղը այնչափ խոստովանալից է որչափ աս:

Այս բոլոր տղաքը դպրոց կ'երթան, եւ մեծ մասը լաւ յառաջդիմութիւն կ'ընեն կոր ստամանց մէջ: Անոնք որ աշխատելու չափ մեծ են, օրուան մէկ մասը կ'անցընեն ու եւ արհեստի կամ առուտորի մէջ, որով կը յուսանք թէ կարող պիտի ըլլան ինքզինքնին ապրեցնելու երբոր մեծնան:

Կրնաք երեւակայել թէ այս ամէնը աշխատութեան եւ յոգնութեան մեծ բեռ մըն է: Կիսս, աղջիկս եւ ես այս գործը մասնաւորապէս մեր վրայ առած ենք, բացի շատ ուրիշ գործերէ ուրիշ ճիւղերու մէջ: Ամիսներէ ի վեր այսքան երկար նամակ մը գրել կարող եղած չէի: Անդլիայէն օրիորդ Նիունհէմ, հիւսիսային Ամերիկայի Հնդկներուն մէջ գործող եպիսկոպոսի մը քոյրը, մօտերս պիտի գայ մեզի աջակցելու, եւ շատ ուրախ ենք այս բանին: Ստիպ-

ուած ենք շրջահայեցութեամբ շարժելու՝ կառավարութեան հրահանգին համաձայն. այս որբանոցներուն մէջ դպրոցի կարգ-կանոն ունեցող ու եւ է բան արտօնուած չէ, որովհետեւ դպրոց մը սուլթանէն հրովարտակ մը ունենալու է, եւ ասոր համար երկար ու դժուարին ձեռնարկներ պէտք են. ուստի տղաքը արդէն հաստատուած դպրոցներ կը յաճախեն:

ՀԵՐՄԱՆ Ն. ՊԱՐՆԵՄ

Խարբերդ, 28 ապրիլ 98

Ժ Ա Մ Ա Ն Յ

Հ Ե Ր Ո Ս ԵՒ Հ Ո Ս Հ Ո Ս

Տեսարանը Ժընէվ, Բաֆէ Լիբիքի մէջ: Երգոր Արտեմիշ, 30 տարեկան, սօցիալ-վէմոկրատ (մարկսիստ), սուանող «սօցիալ դիմութիւնների» տասերկու տարիէ ի վեր. սեփ սեւ վէմք. մազերը մինչեւ ուր՝ յոյն տէրտէրի նման. մօրուքը երկայն, զլուխը ընկերակական լի տըրի (առաջնորդող) լայնեղը զլխարկ. վրան մանթօ մը որուն աջ ծայքը ձախ ուսին վրայ նետուած՝ «ալա տոն Սէզար տը Պազան». ձեռքը հաստ գաւազան, սրճարանը կը մտնէ հաստատ քոյլերով, կոկոզալիկ: Հոն հաւաքուած քանի մը հայ վէմոկրատ-սօցիալները, ամենքն ալ «սօցիալ դիմութիւնների» սուանող, յարգանքով կ'ողջունեն իրենց նահապետը: Երգոր Արտեմիշ, իրեն անծանօթ նիհար պատանի մը տեսնելով, կը հարցնէ թէ ո՞վ է:

- Թիւրքիայից փախստական է. ձեզ է փնտրում:
- Միշտ փախստական. երբեք չին կուում, չին սպաննում այդ հոսհոսները: Կառսոն, էօն պօք:
- Գլխարկը կը հանէ, ալ ձեռքովը մազերը վեր կը նետէ, եւ քարեջուրը կը սկսի խմել: Յետոյ դէպի պատանին.
- Ասա՛ տեսնեմ, ի՞նչ ես ցանկանում:
- Պատանին, Գրիգոր Թադէոսեան, 19 տարեկան, նիհար, թուխ, մեղամաղձիկ. կը պատմէ թէ իրենց քաղքին կոտորածէն հազիւ թէ կրցած է ազատիլ, զրեթէ ամենքը մորթուեր են:
- Դու ո՞ր տեղ էիր:
- Ես պահուրտեր էի. հրաշքով ազատեցայ:
- Հրա՛շք, միշտ հրա՛շք. այդպէս տէրտէրական պըրինցիքներով անշուշտ կը մօրթուէք. դու ինչո՞ւ նրանց վրայ չես յարձակում:
- Ի՞նչպէս ընէի. հազարաւոր էին. գնատակները կարկուտի պէս կը տեղային:
- Գնատակները. հոսհոսներ. հերն անիծած ես այդ գնատակներին. (ալ ձեռքը երկնցնելով ցուցամատն ու բուլթամատը իրարու կը շփէ ուժգին, իբր թէ հրացանին գրնտակները այդպէս կը ճզմէ մասններուն մէջ):
- Օ՛հ, թնդանօթ ալ կար, եթէ արձակէինք՝ ուում բերը...

— Ռուսները: Է՛հ, հասհոսնե՛ր. հերն անիծած ես այդ ուսմբերին. (աջ ձեռքը օդին մէջ կը սաւառնէ, և ափը արագ արագ կը բանայ կը գոցէ, իբր թէ ուսմբերը կը յափշտակէ):

Բոլոր հայ դեմոկրատ-սօցիալները սքանչացումով կը դիտեն: Եագոր, գոհ, և յաղթանակէն յոգնածի վեհու-թեամբ.

— Կառսո՛ն, էօն պօք: Դեհ, ասա՛ ի՞նչ ես ուզում:

— Առանձին կ'ուզեմ խօսիլ:

— (Ցասկոտ) Փո՞ղ ես ուզում:

— Ո՛չ:

— (Ժպտուն). Դեհ, բարի. տղե՛րք, ես մի բիշ յետոյ կուզամ ընթրիքի: (Միաները կը մեկնին): Արի՛ շո՛ւա ասա:

— Խորհուրդ մը յղացեր եմ, յեղափոխական խոր-հուրդ մը:

— Խորհո՞ւրդ. (ստքէն գլուխը շափելով):

— Այո՛, ուսմբ կ'ուզեմ:

— Ո՞ւսմբ, բո՞ւսմբ, ի՞նչ պէտք է անես:

— Ի՞նչ պէտք է ընեմ. պէտք է արձակեմ:

— Դու մի խելօք տղամարդ կ'երեւես. քո հայրը կամ պապը պէտք է կովկասից լինի:

— Ո՛չ:

— Այո՛, այո՛. ո՛ւր պէտք է արձակես:

— Ո՛ւր. յայտնի է, ուր միշտ կ'արձակուի, Պանքա՛ն:

— Դեհ, լա՛ւ, կեցցես. կառսո՛ն, էօն պօք. (ժպտելով) Թրքահայերը շարպաթ են խուսում, բայց ես քեզ բիրա եմ տալիս, քո ընտանիքը կովկասից պէտք է լինի: Ուրեմն հաստատ որոշե՛լ ես բանկին վրայ արձակել:

— Այո՛ (կտրուկ ձայնով):

Եագոր Գրիգորի ուսին զարնելով.

— Որ գու մեզանից ես, կեցցես: Ո՞րքան ես ուզում:

— Երկու:

— Բարի. այստեղ շատ սննեք:

— Հաս չեմ ուզեր:

— Բարի. մեր տղերքը կը յանձնեն այնտեղ: Ե՛րբ կը մեկնես:

— Վաղը. միայն թէ ճանապարհ...

Եագոր խօսքը կարելով, թթուած երեսով.

— Ճանապարհածախս ես ուզում:

— Ո՛չ:

Եագոր, զուարթափայլ.

— Դեհ, լաւ:

— Միայն կը խնդրեմ ինձի ճանապարհ ցոյց տալ, և հասնելու ուսմբերը յանձնել:

— Այդ հեշտ է. այս տեղաց ուղղակի կը գնաս Բու-գարիա, այն տեղաց մեր տղերքը քեզ Պոլիս կը տանեն բարախոտով:

— Ո՛չ, Պոլիս պիտի չերթամ:

Եագոր (խորհրդաւոր ժգիտով մը.) Հասկանում եմ, Էդիսնէի բանկը...

— Ո՛չ:

Եագոր (աւելի խորհրդաւոր ժպտով). — Բրուսա-յինը, այո՛:

— Ո՛չ, ո՛չ:

Եագոր աւելի և աւելի խորհրդաւոր, Գրիգորի ուսին զարնելով. — Հասկանում եմ, հասկանում. էն կեղտոտ բուրժուաներին քաղաքը, Զմիւնիայում:

— Բայց ո՛չ, ո՛չ. կ'ուզեմ Պաթում՝ երթալ:

Եագոր աչքերը լայն լայն բացած ու սարսափահար չորս կողմը նայելով, ցած ձայնով.

— Ա՛խր ի՞նչ պէտք է անես այն տեղ:

— Թիֆլիս անցնելու համար:

Եագոր բիշ մը ազատ շունչ կը քաշէ. միշտ ցած ձայնով.

— Պարսկաստան պէտք է գնա՞ն. մենք այն տեղ ալ տղերք սնենք, բայց աւելորդ է...

Գրիգոր զրպանէն թիֆլիսի թերթ մը կը հանէ, ծա-նուցումներուն մէջ կը փնտռէ և հանդարտ ձայնով.

— Ահա այս պէտք է օղը հանեմ: Է՛ն մեծը աս չէ՞:

Եագոր կը նայի լրագրին վրայ. զողզղալով կը ձգէ. չորս կողմը կը դիտէ թէ ուս լրտես մը չգտնուի. ու ցած ձայնով.

— Թիֆլիսի փոխադարձ կրկնի Բանկը ուսմբ ար-ձակեմ, դու գմուե՛լ ես. կորի՛ր այս տեղաց, այս քաղա-քից, տուրակ սաբակ:

— Կը կարգամ որ Թիւրքերուն սուրով ըրածը Ռու-սերը ուրիշ միջոցներով կ'ընեն. հայ ազգութիւնը շնջելու կ'աշխատին. խորհուրդ յղացայ երթալ փրկել Ռուսիոյ մեր եղբայրները, ինչպէս դուք մեզի կը փրկէք. պանքային վրայ ուսմբ մը կ'արձակեմ, կը լմննայ:

Եագոր գունատ, զողզղացող ձայնով.

— Լո՛ւր, ա՛յ տղայ, պաղատում եմ քեզ: Ախր Ռուսերը Թիւրքին չեն նմանում. ինչե՛ր կ'անեն մեզ, ինչե՛ր:

— Թիւրքին չեն նմանիր. աւելի ի՞նչ կ'ընեն:

— Ի՞նչ կ'անեն, ի՞նչ. մեզ աքսոր ուղարկում են, աք-սոր:

— Ո՛ւր:

— Ո՛ւր. լո՛ւր, Օգեսա՛:

Եագոր կամաց մը վեր կ'ելլէ. չորս դին կը նայի որ ուս լրտես չի կայ և սրճարանէն դուրս կը սարդի՛. Գրի-գորին թողլով վճարել «բիրա»ները, ինքնիւրեմը փոխաւրով.

— Հասհոսնե՛ր, իդիօտնե՛ր, նացիտնալիստնե՛ր, որ ձեր այդ յիմար զենտենցիաներով մեր տունը պիտի քան-դէք: Եթէ յանկարծ մէկ լրտես գտնուէր եւ իմանար այդ դիմին ասածները, իմ խեղճ փեսին Ղարա-Բիլիսայից Օղեսա պէտք է քշեն:

Բաւական յառաջանալէ յետոյ, երբ ապահով կ'ըլլայ թէ ոչ ոք կայ հտեւէն, նորէն հաստատաբայլ կոկոզավիդ կ'ընթանայ հերոսաբար:

ՍԿԵՊՏԻԿ

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

« Հայկական խնդիրը, կ'ըսէ «Տէյլի Նիուզ» իր յուլիս 27ի խմբագրականին մէջ, իրլանտական խնդրին պէս՝ մտքերնէս չելլեր բնաւ. բայց այժմ՝ աւելի յուսալիբ կ'ացնուի ետեան մէջ կը գտնուի քան ժամանակ մը առաջ: » Կը խոստովանիմ որ ընդհանուր քաղաքականութեան մէջ ո' եւ է նշան չի տեսնուիր՝ այս լաւատես յայտարարութիւնը հաստատող: Հայկական դատին պաշտպան ազատական մեծ թերթը՝ Անդլիոյ մէջ գործող հայկական նպաստամատոյց ընկերութեանց տարեկան ժողովին յառաջիկայ դումարման առթիւ է որ կը գրէ այդ տողերը, գործնք ընդունելու է լոկ իբր քաջալեր մը՝ Հայցմով հետաքրքրուող անդլիացի մարդասերներուն, անգամ մը ետ իրենց դրամովը օժանդակելու դժբաղդ ազգի մը սրուն չկրցան այլապէս օգնել:

Իրաւ է որ «Տէյլի Նիուզ» կը թուի բիշ շատ կարեւորութիւն ընծայել Ֆրանսայի արտաքին գործերու նախարարին փոփոխութեանը: Պ. Հանթօ, սուլթանին անձնական բարեկամը, Պ. Հանթօ, որ Սասունի ջարդերէն ետքը, Կ. Պոլսոյ 1895ի ջարդերէն երկու ամիս յետոյ, Տրապիզոնի, Արապկիրի, Տիարպէրի եւ ամբողջ Հայաստանի ջարդերուն յաջորդ օրը իսկ՝ կը գրէր թէ «անկեղծօրէն, յուզուելու բան չի կայ այս տեսարանին հանդէպ», թէ այս ամէնը սուլթանական «միջազգայն» են, և թէ պէտք է թողուլ որ սուլթանը «մէն միայնակ» ի գործ գնէ իր իշխանութիւնը, Պ. Հանթօ վերջապէս ստիպուեցաւ իր պաշտօնը թողուլ ուրիշի մը: Նոր նախարարը, Պ. Տէքասէ, կը թուի աւելի ազդեցիկ քաղաքականութեան մը հետեւիլ Արեւելի մէջ: «Եթէ Պ. Տէքասէ պաշտօնի գլուխ ըլլար վերջին երեք տարիները, կ'ըսէ «Տէյլի Նիուզ», հայկական ջարդերը հաւանօրէն տեղի չէին ունենար: » Ինք կողմակից է ռուսական դաշնակցութեան, բայց գիտնալով այն օգուտները գործնք Ռուսիա կը քաղէ իրեն թիկունք ունենալով ֆրանսական նաւատորմը եւ բանակը, կը մտաբերէ փոխադարձաբար ծառայութիւններ խնդրել անկից: Ռուսիա անշուշտ կը փափաքի հիմա որ Ֆրանսա ուժով ձայն մը լսելի ընել տայ Կ. Պոլիս, Գերմանիոյ ձեռք բերած առաւելութեան դէմ իբր ծանրոց մը, բայց շատ ալ բաղձացող չէ որ Ֆրանսա նորէն դարձնէ իր ուշադրութիւնը դէպի Արեւելք, իր տեղը ամբողջովին Ռուսիոյ թողլէ յետոյ:

Ինչ որ ալ ըլլայ, Ֆրանսայի արեւելեան նոր քաղաքականութիւնը մինչեւ հիմակ փայլուն արդիւնք մը չտուաւ ճիշդ այն խնդրին մէջ որուն ամէնէն աւելի ուժով ձեռք զարկած է: Ֆրանսա 1,200,000 ֆրանքի գումար մը կը պահանջէ օսմ. կառավարութենէն, հայկական ջարդերուն ատեն իր հպատակներուն կրած նիւթական փաստաներուն փոխարէն, օսմ. կառավարութիւնը պատասխանատու բռնելով այդ խոստովութեանց: Անդլիա (33,000 ոսկիի),

Իտալիա (400,000 ֆրանքի), Միացեալ-Նահանգներն ալ նմանօրինակ պահանջագրեր ուղղեցին: Դուռը, ի պատասխանի, ազդու բողոքագրեր մը գրկելով այդ պետութեանց, յայտարարեց թէ բոլոր ուժովը կը մերժէ ո' եւ է պատասխանատուութիւն այդ խոստովութեանց մէջ «որոնք Հայերուն գործն էին եւ որոնց մէջ իսլամներ ալ կեանքերնին կորսնցուցին»: «Եթէ օտարականները ո' եւ է պահանջում ունին, պէտք է զատ բանան անոնց դէմ որոնք իրենց փնտ հասցուցին: »

Կարելի չէ աւելի անպատկառ կերպով պետութեանց թիւն խնդալ: Դուռը կը յայտարարէ թէ պէտք է Հասանին կամ Հիւսէյնին օձիքէն բռնել, դէպքերէն երկու տարի յետոյ: Այլապէս ինք բան մը ընելու սրամաղիբ չէ:

Այս գործին մէջ նախաձեռնութիւնը Ֆրանսայինն էր: Ֆրանսա սպաննաց որ Բարիզի օսմ. Պանքային մէջ վար պիտի գնէ 1,200,000 ֆրանք՝ հելլենական պատերազմին տուգանքէն որ ֆրանսական կառավարութենէն եւ քաջխաւորուած է: Միջազգային օրէնքի տեսակետով, այս անօրինութեան օրինաւորութիւնը շատ շուր կը վերցնէր, բանի որ այդ դրամը թիւրքիոյ խոստացուած էր՝ Թեսալիայէն ելլելուն փոխարէն, ինչ որ կատարեց ճշդիւ: Եւ սակայն, առանց շատ բարակը փնտոելու, հետաքրքրութեամբ կը սպասուէր այդ սպաննալիքին գործադրութեանը:

Եւ ահա կը ծանուցուի որ հելլենական պատերազմական տուգանքին վերջին մասն ալ օսմ. Պանքային կողմէ ամբողջութեամբ յանձնուեր է թիւրք կառավարութեան:

Պ. Տէքասէի ուրիշ գործերուն սպասելու է, Արեւելքի մէջ իր սկսած «ազդեցիկ» քաղաքականութեան ուժը հասկնալու համար: Այս առաջին գործը, ռամիկ բայց ուժով բացատրութեամբ մը, ճըլլա ելաւ:



Կովկասի հայ գաղթականներուն վերադարձին խնդիրը՝ միշտ սեղանի վրայ է: Յուլիս 18ին կը ծանուցուէր թէ Կ. Պոլսոյ ռուսական պեսպանը ծանուցագրեր մը ուղղեր է Դրան, բացորոշ կերպով պնդելով գաղթականներուն դարձին համար: Քիչ ետքը, կը հեռագրուէր թէ Դուռը վերջապէս հաւանք է այդ դարձին: Ու ահա հիմա կը ծանուցուի թէ Բեղրպուրիի օսմանեան պեսպանին նոր դիմումներուն վրայ, Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը իմացուցեր է իրեն որ հրահանգ չըրկուած է Կովկասի իշխանութեանց՝ կեցնելու գաղթականներուն չուն, մինչեւ որ խնդիրը կարգադրուի Կ. Պոլսոյ ռուսական պեսպանատան եւ Դրան միջեւ:

Ռուսիա, ինչպէս կ'երեւայ, շատ փափաքող չէ այս խնդիրը միանգամ ընդ միշտ կարգադրելու: Թիւրքիոյ վրայէն բեռ մը պիտի վերնար, եթէ այս գործը լինար, և Ռուսիա օր մը հանգիստ տալ չուզեր իր տխմար դրացիին: «Ռուսիա, կ'ըսէ «Սթանտարտ», հաւատարիմ իր քաղաքականութեանը որ է միշտ դժուարութիւն յարուցանել թիւրքիոյ», նոյն իսկ այդ թշուառ գաղթականները իր հաշիւներուն խաղալիք կ'ընէ:

«ԱՆԱՋԻՏ»

Հայ գրասէրներուն համար զեղեցիկ լուր մը ունինք ապելք: Արշակ Չօպանեան, որ երկուքուկէն տարի է Բարիդի մէջ աւելի՛ զբաղած էր ֆրանսական գրականութեան մէջ Հայ ազգը ու միաքը ճանչցնելու գրքերով, տեսարկներով ու յօդուածներով, առանց թողլու այդ այնքան կենսական գործը՝ կը դառնայ նորէն հայ գրականութեան մշտական ձեռնարկով մը: Յառաջիկայ նոյեմբեր 1 էն սկսեալ, Բարիդի մէջ սիրտի հրատարակէ ԱՆԱՋԻՏ անունով ազգային, գրական, զեղարուեստական ամսաթերթ մը, — զուտ մտաւորական հրատարակութիւն մը, առանց ու եւ է քաղաքական գործունէութեան կամ կուսակցական կապի:

Յայտարարութեանը սէջ, զոր կը զարգարէ տաղանդաւոր հայ նկարիչ Պ. Է. Շահինի մէկ ճակատանկարը՝ հին հայ նկարադարը ձեռագիրներու նմանողութեամբ յօրինուած, Չօպանեան իր ծրագիրը պարզելով, կը յայտնէ թէ սոգորուած է «մանաւանդ այն մտածմամբ՝ թէ Բարիդէն՝ այս տիեզերական կեդրոնէն՝ մեկնած բազմակողմանի հրատարակութիւն մը կրնայ տեսակ մը միջնորդ հանդիսանալ եւրոպական քաղաքակրթութեան եւ մեր ժողովրդին միջեւ, եւ միանգամայն՝ աշխարհի շուրջ կողմը ցրուած Հայերուն մէջ բարոյական կապ մը ձեւացնել:»

ԱՆԱՋԻՏ սիրտի պարունակէ 1. Ուսումնասիրութիւններ հայ ժողովրդին պատմութեան, գրականութեան, գեղարուեստին ու լեզուին վրայ, եւ տեսութիւններ անոր ներկայ բարոյական եւ նիւթական կացութեան մասին. 2. Ուսումնասիրութիւններ գեղարուեստական, գիտական եւ ընկերական ընդհանուր խնդիրներու վրայ. 3. Թարգմանութիւններ օտար հին եւ նոր մատենագրութեանց ամէնէն կարեւոր հրաշակներուն. 4. Վէպեր, վիպակներ եւ բանաստեղծութիւններ ազգային կամ առհասարակ արեւելեան կեանքէ. 5. Ոտանաւոր եւ արձակ գրութիւններ՝ գրական ամէն սեռէ. 6. Հրատարակութիւն եւ ուսումնասիրութիւն հին ու նոր հայ ժողովրդական բանաստեղծութեանց, աւանդութեանց եւ հէքեաթներու: ԱՆԱՋԻՏ սիրտի ձգտի մագնսաւորապէս ազգային գրականութիւնը զարգացնել զուտ հայ տարրերով:

«Այս բազմազան ծրագրին իրականացման համար ուրախ եմ՝ ծանուցանելու որ գրադէտներու, արուեստագէտներու եւ գիտնականներու խումբի մը աջակցութիւնը ապահոված եմ արդէն, եւ կը յուսամ՝ գործակից ունենալ բոլոր այն հայ մտքերը որոնք կը բաղձան մտաւորական լծակին միջոցով ազգին բարոյական մակարդակը բարձրացնել:

«ԱՆԱՋԻՏ կոչեցի Հանդէսը, մեր հինաւորեց եւ յաւիտենական աստուածունհիին անունով, որպէս զի Ոսկեծղին, Անարատը, բարութեանց Բաշխիչը, հայ ցեղին հօգին պատկերող մայրական Դիցանոյշը՝ այս ազգային-գրական ձեռնարկը իր լուսաւոր թեւերովը հովանաւորէ եւ զայն զեղեցիկութեամբ ու կենդանութեամբ պայծառացնէ:»

ԱՆԱՋԻՏի առաջին թիւը, ինչպէս ըսինք, հրատարակ սիրտի ելլէ յառաջիկայ նոյեմբեր 1ին: Բաժանորդագիրը սիրտի ըլլայ տարեկան 12 ֆրանք եւ վեցամսեայ 6 ֆրանք՝ օտար երկիրներու համար, 10 ֆրանք եւ 5 Ֆրանսայի համար: Բաժանորդագրութիւնը բացուած է Չօպանեանի հասցէն է Բարիդ, 6, Place de l'Odéon: Մեր սրտագին ինդակցութիւնները մեր բարեկամին ու աշխատակցին: Տարակոյս չունինք թէ իր ձեռնարկը կոչուած է մեծագոյն յաջողութիւնը ունենալու:

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը գրեն մեզ. «Ահաւասիկ ձեզի տեղեկութիւն մը որ, որչափ գիտեմ, ժամանակին ոչ մէկ եւրոպական թերթի մէջ հրատարակուեցաւ եւ որ կ'արժէ երեւան հանել:

«Կը յիշէք թէ Դրօշակեանները 1896 օրոստոս 14 26 ին Օսմ. Պանքայէն Կուրս ելլել յանձն առին, շնորհիւ ռուսական գեոպանատան առաջին թարգման Պ. Մաքսիմօֆի ջանքերուն եւ «ճարտար պերճախօսութեանը» ինչպէս կ'ըսէ «Դեղին Գիրք»ը: Երբ որ Պանքային տնօրէն Պ. Օպուանօ Ելլտըղի պալատը գնաց ուշ ատեն՝ սուլթանին հասկցնելու կացութեան ծանրութիւնը, Պ. Մաքսիմօֆ «պատահաբար» հոն կը գտնուէր այդ միջոցին եւ յանձն առաւ միջնորդել Դրօշակեաններուն մօտ, ու յաջողեցաւ իր ձեռնարկին մէջ:

«Քիչ ժամանակ ետքը, Պ. Մաքսիմօֆ 10,000 օսմ. ոսկի կը խնդրէր Օսմ. Պանքայէն, ի վարձատրութիւն իր մատուցած ծառայութեանը: Պանքան 5,000 ոսկի տալ միայն յօժարեցաւ: Երեւոյթները փրկելու համար, Պանքային տնօրէնութիւնը ուղղակի դիմեց ռուսական գեոպանատան, յայտնելով թէ կը փափաքի զբաժանական նուէր մը ընել Պ. Մաքսիմօֆի՝ Պանքային մատուցած ծառայութեանը փոխարէն: Գործը Բեդրպուրի տեղեկագրուեցաւ, ուրկից պատասխան եկաւ թէ Պ. Մաքսիմօֆ արտօնուած է ընդունելու նուէրը: Ու Պ. Մաքսիմօֆ անմիջապէս ըստացաւ իր 5,000 ոսկին:»

—Երկուտուն կը գրեն մեզ. «Կ. Պոլսոյ Խառն ժողովը խնդրած էր Իզմիրլեան սրբազանէն որ Երկուտոսի առաջնորդութենէն հրաժարի, խոստանալով «Պոլսոյ առողջ օղջ ծծել տալ իրեն քիչ ատենէն»: Իզմիրլեան սրբազան պատասխանած է որ չի կրնար ոտնակոխ ընել Երկուտոսի Գաւառական ժողովին քուէն:

—Յառաջիկայ սեպտեմբեր 23ին եւ 24ին, Գարտիֆի մէջ ընդհանուր ժողով սիրտի գումարեն Անգլիոյ հայկական նպաստամատոյց բոլոր ընկերութիւնները, նախագահութեամբ Պ. Ճէյմս Պրայսի, որ տարիներէ ի վեր հայկական դատին մեծ ջատագոյն է Անգլիոյ մէջ: Իրեն սիրտի աշակցի ուրիշ ականաւոր անձնաւորութիւններէ բաղկացած յանձնախումբ մը: Բրոֆ. Բամսէ, որ գեոնոր զարձած է Արեւելքէն, եւ Պ. Էտուրբա Միլլարա, որ վեր-

Չերս Հայաստան կը գտնուէր, Հայաստանի կացութեան մասին նորագոյն տեղեկութիւնները պիտի հազորդեն: Հայաստանի Բարեկամներուն վերջին ժողովը տեղի ունեցաւ Լոնտոն 1897 մայիսին: «Անհրաժեշտ է որ, կ'ըսէ «Տէյլի Նիուզ», անգլիական հասարակութիւնը միշտ հետաքրքրուի Հայոցով, որպէս զի կարելի ըլլայ այդ բազմակարօս ժողովուրդը ընկերական կանոնաւոր դրութեան մը մէջ գնել նորէն:»

— Անգլիոյ Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողովը վերջերս ի նիստ գումարեցաւ Լոնտոն, կրօնքը— Հաուսի մէջ, Ուէսթմինսթըրի զբսին նախագահութեամբ:

Կանոնիկոս Մաքքու ժողովին ներկայացնելով Վենետիկի Միթրաքեանց կողմէ պատուիրակի մը, որ շնորհակալութեան ուղերձ մը, գեղանկար աւլում մը եւ զրքեր նուէր բերած էր, ըսաւ թէ յորմէհեաէ Միթրաք 1715ին Ս. Ղազարի մէջ հիմնած է միաբանութիւնը որ իր անունը կը կրէ, Վենետիկի կեդրոնատեղին եղած է կրօնաւորներու եւ ուսուցիչներու նշանաւոր մարմնի մը աշխատութեանց, որոնց նպատակը եղած է զարգացնել Հայոց բարոյական եւ կրօնական դաստիարակութիւնը: Հ. Ալիշանի անունը ընտանի է ամէն հայ տան մէջ: Երբ հիմնադրու յետաւ 1749ին, ոչ միայն վանք մը եւ եկեղեցի մը հիմնուած էր Ս. Ղազարի կղզեակին մէջ, այլ եւ դպրոց մը ու սպարան մը անգու կը գործէին, եւ ամբողջ հաստատութիւնը, ինչպէս այժմ, բարգաւաճ կացութեան մէջ էր: Տրայանու պոլսոյ արքեպիսկոպոսը (արքահայր Վենետիկի Միթրաքեանց) եւ իր միաբանութիւնը կը փափաքէին իրենց շնորհակալութիւնը յայտնել Ուէսթմինսթըրի զբսին՝ Թիւրքիոյ, Պուլկարիոյ եւ Եզրպատտի մէջ Հայոց մատուցած բազմապատիկ ծառայութեանցը համար, ու կը խնդրէին իրմէ ընդունիլ, իբր պաշտօնաւոր մը իրենց յարգանքին ու երասխապիտութեանը, տեսարաններու եւ կենդանագիրներու աւլում մը, ինչպէս եւ Հ. Իսովէրտենցի Հայոց Պատմութիւն մը (անգլիերէն), որ վանքին մէջ սպուած ու կազմուած է:

Ուէսթմինսթըրի գուքսը, իր շնորհակալութիւնը յայտնելով նուէրին համար, ըսաւ թէ քաջ կը յիշէ աարիներ տալ իր ըրած այցելութիւնը Ս. Ղազար եւ վայելած ազնիւ ասպնջականութիւնը: Վերջին շորս տարիները անսակի կերպով տխուր տարիներ եղան, ո'չ միայն անոնց համար որոնք այրի ու որք մնացին՝ հրով ու սրով ջարդերու արհաւիրքներուն մէջտեղ, այլ եւ անոնց համար որոնք ստիպուեցան հեռուէն հանդիսատես ըլլալ այդ եղեռներուն եւ անկարող գտնուեցան զոհերը պաշտպանելու կամ արդարութեան յանձնելու ու եւ է մարդասպան: Ապագան մութ կ'երեւնայ, եւ փոքր—Ասիայէն առնուած տեղեկութիւնները հեռի են քաջալերական ըլլալէ:

Սըր. Ճ. Ու. Ուիլսոն, Կ. Պոլսէն, խօսեցաւ սպասարկութեան գործին վրայ: Ըսաւ թէ ձեռք բերուած զուտ արդիւնքը, նուազագոյն թուանշանները տալով, հետեւեալն է. —250,000 հոգի անթութիւնէ ազատած են, որոնց իբր մէկ քառորդը՝ սովամահ կորնչելէ. 25,000 հոգի մուրացկանութիւնէ ազատած են՝ իրենց Յանձնա-

ժողովին կողմէ արուած աշխատութիւններով. ե 4,000 էն 4,500 որք այսօր կը խնամուին ու կը կրթուին, անշուշտ ո'չ Յանձնաժողովին կողմէ այսօր, բայց այս որբախնամ գործին հիմը իրենց Յանձնաժողովը դրած է, որ սրբախոթեամբ փոխանցած է գործը ուրիշ յանձնաժողովներու զանազան երկիրներու մէջ, որոնք ուղղակի կը գործեն այժմ: Վերջապէս, իրենց Յանձնաժողովը, իր նախաձեռնութեամբ, մեծ բաժին մը ունեցած է թող չտալու մէջ որ Բրիտանիոյ Վենետիկի հեռանայ ցեղ մը որ աւելի քան 1,700 տարի է կը պահէ իր ազգութիւնը եւ կը բոսնէ: Իրաւ է որ Կ. Պոլսոյ Յանձնաժողովը աւելի քան 200,000 անգլ. սակիի նպաստի գրամ ստացած է Միացեալ—Նահանգներէն, Գանատայէն, Զուիցերիայէն, Գերմանիայէն: Բայց անտարակոյս կրօնքը—Հաուսի Յանձնաժողովին իբր ուսուցիչայ տուած օրինակն էր որ ազգեց մարդասիրութեան ուրիշ կեդրոններուն վրայ: Ուրֆայի մէջ Միս Եալքը անձամբ ազատեց հարիւրաւոր հոգի եւ վերակազմութեան գործ մը սկսաւ որ սարօրինապէս յաջողեցաւ: Տր. Պարնըմ, Խարբերդի մէջ, նոյնպէս հարիւրաւոր հոգի ազատեց՝ մահուան վտանգը չաք առնելով: Տր. Բէյնոլտս, Վանէն, եւ Պատ. Գոլ, անասելի յոշնուութիւններով վերականգնեցին Սաուսի գիւղերը: Պարոնայք Ալլէն, Չէմպլըս, Կէյլս, Մարդին, Մաքալըմ, Լի, Անտրիուս, Բարմէի, Գրոֆորտ, Հիուպարտ, Բերրի, Մարդին ու Սանալըս, եւ Միս Պըշ, գերագոյն անձնազուգութեան ոգիով, իրենց ընտանիքը ու հանգիստը թողուցին՝ յանձն առնելու համար ամէն տաժանք, ի սեր մարդկութեան: Մոռնալու չէ նոյնպէս այս գործին աջակցող անգլիացի հիւպատոսները:

Սըր Ճոն Քլենտոնէյ (երեսփոխան) առաջարկեց, եւ կանոնիկոս Ուիլսոնի Երկրորդեց, շնորհակալութեան քուէ առ Սըր Ճ. Ու. Ուիլսոն՝ իր բազմաբժէք ծառայութեանցը համար իբր նախագահ Հայկական նպաստամատոյց Յանձնաժողովին Կ. Պոլսոյ ճիւղին: Ասիկա միաձայնութեամբ ընդունուեցաւ, եւ նիստը վերցաւ:

ՀԱՍՑԻ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար: